Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Կոռուպցիային, հաշվետվողականության, բարեվարքության վերաբերող բաժինները «Հասարակագիտություն» առարկայի միջին և ավագ դասարանների համար նախատեսված դասագրքերում

Հետազոտող՝ Տաթևիկ Բարսեղյան

ԵՐԵՎԱՆ 2019

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակ/ների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 6
ՈՒՍՈՒՑՉԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ 13
ԴԱՍԱԳՐՔԵՐ 14
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 21
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 32
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 34
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 38

Ներածություն

2018 թվականի հեղափոխությունից հետո Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) կոռուպցիայի դեմ պայքարը թևակոխել է նոր փուլ: Սա բազմիցս շեշտվում է թե՛ ամենաբարձ մակարդակի հավասարառություններում, թե միջազգային հարթակներում, թե՛ տեղական փաստաթղթերում: Այսպես՝ ՀՀ կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) ծրագրում ռազմավարական կարևորագույն ուղղություններից է համարվում «կոռուպցիայի դեմ առավել թիրախավորված և արմատական պայքար մղելը, կոռուպցիայի հանրային մերժումը և կոռուպցիայից զերծ հանրության առկայությունը»[1]:

Սակայն կոռուպցիայի դեմ պայքարում երկարաժամկետ արդյունքների հասնելն անհնար է առանց քաղաքացիների իրազեկվածության և աջակցության: Այդ աջակցությունը ստանալու, կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք ձևավորելու համար անհրաժեշտ է ներդրում անել քաղաքացիների կրթության, իրազեկվածության բարձրացման համար: Իսկապես ճիշտ է ասված, որ «կրթությունը երբեք չեզոք չէ»[2]: Յուրաքանչյուր կրթական համակարգ արտահայտում է գործող իշխանության օրակարգն ու փիլիսոփայությունը: Կրթության միջոցով կոռուպցիայի մասին խոսելը, այն դատապարտելը, գիտելիք, հմտություն և փորձառություն տարածելը ուղիղ համեմատական է յուրաքանչյուր պետության վարած քաղաքականությանը:

Այս առումով հատկանշական է, որ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022թթ միջոցառումների ծրագիրը» նշում է, որ « …ակնհայտորեն պետք է մեկտեղվեն Կառավարություն-քաղաքացիական հասարակություն-քաղաքացի համատեղ ջանքերը՝ ուղղված միասնական նպատակի կենսագործմանը: Նույնչափ կարևոր է նաև հանրային լայն աջակցության և իրավական մշակույթի շարունակական ձևավորման ուղղությամբ ակտիվ քայլերի ու ինստիտուցիոնալ գործիքների ներդրումը, որի համակարգում էական դերակատարում կարող է ունենալ հակակոռուպցիոն կրթությունը: … Որպես հակակոռուպցիոն ռազմավարության նպատակ՝ պետք է սահմանել նաև ՀՀ-ում կոռուպցիայի դեմ անհանդուրժողականության և անընդունելիության կայուն հասարակական վերաբերմունքի ձևավորումը՝ որպես կոռուպցիան արմատախիլ անելու ինստիտուցիոնալ գործիք3:
Եթե մենք ցանկանում ենք ունենալ այնպիսի երկարաժամկետ արդյունքներ, որոնք կախված չեն լինի այսօրվա կամ վաղվա իշխանությունների ցանկություններից և

[1] ՀՀ կառավարության ծրագիր, 2019, գլուխ 3
[2] Friere P., "Pedagogy of Oppressed", 1970, p. 103

[3] ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022թթ միջոցառումների ծրագիր, 2019

քաղաքական առաջնահերթություններից, ապա հիմնավոր փոփոխություններ պետք է իրականացվեն կրթական համակարգում, մասնավորապես՝ հանրակրթության ոլորտում:

Թեև ՀՀ-ում մեծ թափ են ստանում տարբեր կազմակերպությունների և փորձագետների կողմից իրականացվող ոչ-ֆորմալ կրթական ծրագրերը, այնուամենայնիվ դրանց ծավալը, երբեմն նաև որակը ցանկալի արդյունքի չի կարող հասցնել, ուստի Հայաստանում քաղաքացիական կրթության որակի համար առաջին հերթին շարունակում են «պատասխանատու մնալ» հասարակագիտական առարկաները:

«Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում պետք է լիարժեք ծավալով և հանրամատչելի եղանակով ներկայացվեն քաղաքացիական գիտակցության հիմքում ընկած այնպիսի հիմնարար արժեքները, ինչպիսիք են կոռուպցիայի դեմ պայքարը, բարեվարքությունը /օրինավորությունը/, թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

Հետազոտությանը կվերլուծի իրավիճակը, հասարակագիտական առարկաների արդյունավետ ուսուցմանը նպաստող և խանգարող միջավայրը, ինչպես նաև կանի կոնկրետ առաջարկություններ՝ բարելավելու այս առարկաների ուսուցումը հանրակրթական դպրոցներում:

Մեթոդաբանություն

Հետազոտությունը կպատասխանի հետևյալ հիմնական հարցերին՝

1. Ինչպե՞ս են ներկայացված կոռուպցիային, հաշվետվողականությանը, բարեվարքությանը վերաբերող թեմաները միջին և ավագ դպրոցների «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում:
   - Ի՞նչ մակարդակի և ծավալի տեղեկատվություն և գիտելիքներ են պարունակում այդ դասագրքերը նշված ոլորտներում:
   - Վերոնշյալ թեմաների վերաբերյալ ի՞նչ պահանջներ են դրված ՀՀ պետական չափորոշիչում և «Հասարակագիտություն» առարկայի միջին և ավագ դպրոցի չափորոշիչներում:
2. Ի՞նչ փոփոխություններ պետք է կրեն միջին/ավագ դասարանների հասարակագիտական առարկաների դասագրքերի կոռուպցիային, հաշվետվողականությանը, բարեվարքությանը վերաբերող բաժինները՝ միջազգային լավագույն փորձին և ՀՀ կրթության ռազմավարության պահանջներին համապատասխան:
   - Ի՞նչ փոփոխություններ պետք է ամրագրվեն չափորոշիչներում և ուսուցչի մեթոդական ձեռնարկներում:

Այս հարցերի պատասխանները պարզելու նպատակով ուսումնասիրվել է՝

- ՀՀ կրթության պետական չափորոշիչը
- Հանրակրթության միջին և ավագ դպրոցների հասարակագիտական առարկաների չափորոշիչները
- Հանրակրթական միջին և ավագ դպրոցների հասարակագիտություն

առարկայի ծրագրերը և պարտադիր միջուկը

- «Հասարակագիտություն» առարկայի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանի դասագրքերը՝ կոռուպցիային, բարեվարքությանը, հաշվետվողականությանը վերաբերվող բաժինների, նյութերի բովանդակությունը վերլուծելու նպատակով: Հարկ է նշել, որ ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի (այսուհետ՝ ՀՀ ԿԳՍՄ) նախարարության կողմից հաստատված են և շրջանառվում են յուրաքանչյուր դասարանի համար նախատեսված տարբեր հեղինակների խմբի և հրատարակչության հեղինակած երկուական գրքեր (Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., «Հասարակագիտություն 8», 2013թ., Գյուլբուդաղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., «Հասարակագիտություն 8», 2013թ., Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Հասարակագիտություն 9, 2013թ., Գյուլբուդաղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., «Հասարակագիտություն 9», 2013 թ.): Բովանդակային վերլուծություն է կատարվել՝ պարզելու՝ արդյոք այս հասկացությունները ներկայացվում են առանձին բաժիններում, թե այլ թեմաների ներքո: Եթե առանձին բաժիններում, ապա ինչ ենթաթեմաներ ունեն: Եթե այլ թեմաների ներքո, ի՞նչ կոնտեքստում են օգտագործվում:
- Բովանդակային վերլուծության են ենթարկվել ուսուցիչների համար նախատեսված համապատասխան մեթոդական ձեռնարկները:
- Մշակվել են հարցազրույցների և ֆոկուս խմբային քննարկումների հարցաշարեր:
- Իրականացվել է 15 հարցազրույց ոլորտի պատասխանատուների, հասարակագիտություն առարկան դասավանդող ուսուցիչների (Երևանի, Արագածոտնի և Արարատի մարզի տասը ուսուցիչ՝ ութ կին, երկու տղամարդ), և փորձագետների հետ: Կազմակերպվել է երկու ֆոկուսխմբային քննարկում Արագածոտնի և Արարատի մարզի աշակերտների մասնակցությամբ: Ընդհանուր առմամբ քննարկումներին մասնակցել է ավագ դպրոցի քսանհինգ աշակերտ:
- Ուսումնասիրվել է միջազգային լավագույն փորձը՝ պարզելու դպրոցական ծրագրերում այս թեմաների արդյունավետ և համապարփակ ներկայացման մեթոդները, ընդհանուր մոտեցումները: Պետք է նշել, որ պետությունները համեմատաբար նոր են սկսել հակակոռուպցիոն գիտելիքները ֆորմալ կրթության մեջ ներդնելու պրակտիկան, ուստի շատ դժվար է դեռևս չափել դրա ազդեցությունը: Առաջնային ուսումնասիրությունից հետո համեմատության համար վերցվել են այն երկրները, որոնք ունեն արդեն իսկ ներդրված և փորձարկված մեթոդաբանություն: Հետազոտության մեջ ներառված երկրներից որոշների փորձը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով Հայաստանի հետ ունեցած ընդհանուր պատմական անցյալը:
- Այս ամենի հիման վրա կազմվել են կոնկրետ առաջարկներ՝ փոփոխելու դասագրքերի բովանդակությունը, ինչպես նաև փոփոխելու չափորոշիչների պահանջները:

Դասագրքերը և հարակից նյութերի բովանդակությունն ուսումնասիրելիս հաշվի են առնվել հետևյալ առնչակից ենթահասկացությունները՝

- կոռուպցիա – ինչ է կոռուպցիան, պատճառներ, հետևանքներ – կոռուպցիայի տեսակներ/ ձևեր (կաշառք, հովանավորչություն, յուրացում, շորթում և այլն)
- բարեվարքություն – օրինավորություն, էթիկայի նորմեր, չափանիշներ՝ հանրային ծառայողների և պետական պաշտոնյաների օրինակելի վարքագիծը պայմանավորող
- հաշվետվողականություն - պետական մարմինների թափանցիկությունը, քաղաքացիների առաջ բաց և հաշվետու լինելու կարևորությունը, իրենց գործունեության և լիազորությունների պատշաճ կատարման համար պատասխանատվությունը:

Չափորոշիչներ

Դասագրքերի կազմման, կրթական ծրագրերի մշակման գործընթացի ամենավերևում ընկած է հանրակրթության պետական չափորոշիչը, որը մշակվում և ընդունվում է կրթության կառավարման պատասխանատու լիազոր մարմնի, այն է՝ ՀՀ ԿԳՍՄ նախարարության կողմից:

ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ պետական չափորոշիչ) սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական պահանջները և սովորողների գնահատման համակարգը: Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնական բովանդակության բնագավառները ու կրթության հիմնական բովանդակության բաղադրիչները, շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթության աստիճանների և ուսումնական բնագավառների՝ տարրական, միջին և ավագ դպրոցների շրջանավարտների համար, ինչպես նաև ներառում է հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ ն ու սովորողների գնահատման ձևերը, սանդղակները:

Պետական չափորոշչի հիման վրա է նաև իրականացվում հանրակրթական հաստատությունների լիցենզավորումը և դրանց գործունեության վերահսկողությունը, կազմակերպվում է ուսուցիչների և մանկավարժական ղեկավար կադրերի պատրաստումը, մասնագիտական կատարելագործումը և ատեստավորումը:

Հանրակրթության պետական չափորոշչի նախագիծը մշակելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որն էլ իր հերթին պետական չափորոշչի առանձին բաղադրիչների նախագծերի մշակման նպատակով ստեղծում է մասնագիտական աշխատանքային

խմբեր, այնուհետև հանձնաժողովը աշխատանքային խմբերի մշակած նախագծերի հիման վրա ձևավորում է չափորոշչի նախագիծը, որն արդեն սահմանված կարգով ներկայացվում է ՀՀ կառավարության հաստատմանը:

Հանրակրթության պետական չափորոշչի հիման վրա վերանայվում են ծրագրերը, դասագրքերը և այլ ուսումնական նյութեր:

Հանրակրթության պետական չափորոշիչը տեղայնացվում է դպրոցական բաղադրիչով՝ ելնելով դպրոցի առանձնահատկություններից, սովորողների նախասիրություններից ու կարիքներից և համայնքի կարիքներից:

Չափորոշչի նորմերն ու դրույթները պարտադիր են Հայաստանի Հանրապետության կրթության կառավարման մարմինների, տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր, հատուկ և մասնագիտացված հանրակրթական ծրագրեր (այսուհետ՝ հանրակրթական ծրագրեր) մշակողների և իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ու սեփականության ձևերից և ենթակայությունից:

<u>Հանրակրթական առարկաների չափորոշիչները</u> (այսուհետ՝ առարկայական չափորոշիչ) մշակվում են հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան և հաստատվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի՝ ՀՀ ԿԳՍՄ գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից:

Առարկայական չափորոշչի հիման վրա մշակվում են ուսումնական առարկաների պետական ծրագրերը, որոնք հիմք են ծառայում դասագրքերի, ձեռնարկների և ուսումնական այլ նյութերի ստեղծման համար:

Հանրակրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է առարկայական ծրագրերի միջոցով և չափորոշչի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված «գիտելիքները, սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները»:

Տվյալ ուսումնասիրության առարկա հանդիսացող հասկացությունները ներառված են «Հասարակություն, հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառի մեջ: **<u>Տարրական դպրոցում</u>** այս հասկացություններին վերաբերող որևէ պահանջ չկա, այստեղ ավելի շեշտադրված են հայրենիքի, ազգի, պետության նշանակության գիտակցմանն ուղղված չափորոշիչներ: Հետազատողի, ինչպես նաև հարցված որոշ փորձագետների կարծիքով այստեղ ևս հնարավոր է ներառել պարզագույն պատկերացումներ ուսումնասիրվող հասկացությունների վերաբերյալ:

<u>Միջին դպրոցում</u> ծրագրի «Հասարակություն և հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառում, բացի ազգային պատմամշակութային արժեքների ճանաչողությունից և ազգային ինքնագիտակցությանն ամրապնդմանն ուղղված նպատակներից նշվում է նաև՝ ժողովրդավարական սկզբունքներով և արժեքներով առաջնորդվող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու

համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացու ձևավորումը: Կարևորվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները կատարելու, ինչպես նաև ազգային և բարոյական արժեքներին հետևելու անհրաժեշտությունը:

Հետաքրքրական է, որ որոշ արժեքներ, ինչպես օրինակ՝ ազգային-հոգևոր կառույցները կարևորելը կարմիր թելի պես կրկնվում է տարբեր դասարաններում՝ ամեն անգամ հարստանալով և լրացվելով, իսկ որոշները, օրինակ՝ ժողովրդավարության, հավասարության կամ խտրականության բացառման սկզբունքները միայն մեկ անգամ:

Թեև ուսումնասիրությանը հետաքրքրող հասկացությունները ուղղակիորեն չեն շեշտվում, սակայն դրանք կարող են մաս կազմել վերոնշյալ տարբեր կետերի, օրինակ՝ ժողովրդավարության, իրավունքի, պետական կառավարման, քաղաքական ոլորտների և այլն: Մյուս կողմից, եթե շեշտադրվում է օրինակ հայ ազգի, հայկական քաղաքակրթության բացառիկությունը, ապա կարելի է շեշտադրել նաև օրինավորությունը, իրավապաշտ քաղաքացի լինելու անհրաժեշտությունը:

Սա վերաբերում է նաև ավագ դպրոցի չափորոշչին: Ավելի լավ պատկերացնելու համար ավագ դպրոցի օրինակը ուղղակի մեջբերենք չափորոշչից:

<u>Ավագ դպրոցի ծրագրի</u> «Հասարակություն, հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝

1) ազգային և համաշխարհային հիմնախնդիրների, մարդկության և սեփական ազգի պատմության և զարգացման վերաբերյալ համակարգված գիտելիքների տիրապետող,

2) պետական մտածողություն և գործելակերպ ունեցող և դրանց հասնելու ցանկություն և կամք դրսևորող,

3) հայրենասեր և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ,

4) անձնական, խմբային, ազգային և պետական շահերի ներդաշնակության անհրաժեշտությունը գիտակցող,

5) իր ժողովրդի նյութական ու հոգևոր արժեքները գնահատելու և պաշտպանելու պատրաստ,

6) ընտանիք կազմելու և ազգային ընտանեկան ավանդույթներին ու նորմերին հետևելու անհրաժեշտությունը գիտակցող,

7) ազգամիջյան և միջազգային հարաբերություններում փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության և բարիդրացիության անհրաժեշտությունը կարևորող,

8) «կրթություն ամբողջ կյանքի ընթացքում» ելակետային սկզբունքը կարևորող և դրան հետևող,

9) ազգային ու համամարդկային արժեքներ կրող մարդու, ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող քաղաքացու ձևավորմանը[4]:

Ավագ դպրոցի ծրագրում, ըստ չափորոշչի, ներառված պետք է լինեն գիտելիքներ հիմնականում հայ ժողովրդի ազգային հիմնախնդիրների, աշխարհաճանաչողության, աշխարհի միասնականության և բազմազանության մասին փիլիսոփայական տեսակետների, Հայաստանի համար համաշխարհայնացման (գլոբալացում) հնարավոր հետևանքների, փիլիսոփայության, տնտեսագիտության, քաղաքագիտության, հոգեբանության, բարոյագիտության և գեղագիտության հիմունքների մասին: Նշվում է նաև ազգային ավանդույթների կարևորության մասին:

Ինչպես տեսնում ենք, շարունակելով ցածր դասարանների չափորոշիչների տրամաբանությունը, ավագ դպրոցի չափորոշիչը շեշտադրում է ազգային-հոգևոր արժեքները կարևորող ավանդական բարոյական նորմերով առաջնորդվելը: «Ժողովրդավարական արժեքները գիտակցող» քաղաքացու ձևավորումը, ընդհանուր առմամբ, ավելի ստորադասված է, հիշատակվում է միայն մեկ տողում, առանց մանրամասների:

Այս բաժնում հարկ է նշել, որ ուսուցիչների հետ քննարկումների ժամանակ, թեև բոլորը նշում էին, որ ծանոթ են պետական և առարկայական չափորոշիչներին, այնուամենայնիվ դժվարանում էին նշել դրանց կետերից մի քանիսը, իսկ հետագայում պարզ էր դառնում, որ նրանք խառնում են պետական և առարկայական չափորոշիչ, ծրագիր փաստաթղթերը և մեծամասամբ կիրառում են միայն առարկայական ծրագրերը՝ ժամերով:

Առարկայական չափորոշիչ և ծրագիր

Հասարակագիտության առարկայական չափորոշչի մշակման համար հիմք են ծառայել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը և Հանրակրթության պետական չափորոշիչը:

Գործող չափորոշիչը և ծրագիրը գործածության մեջ են դրվել 2012 թվականի փետրվարին:

Նախորդ ծրագրի համեմատությամբ գործող ծրագրում կատարվել են զգալի փոփոխություններ:

Այս չափորոշիչը ներառում է՝ հասարակագիտության հայեցակարգը (որում ներկայացված են այն սկզբունքները, հարցադրումներն ու հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ դեր ունեն հանրակրթության բովանդակության մեջ առարկայի դերն ու գործառույթները որոշելու և չափորոշչին ու ծրագրերին համապատասխան դասագրքերը, ձեռնարկները և այլ ուսումնական նյութեր մշակելու համար), առարկայի ուսումնական նպատակները, առարկայի բովանդակային պարտադիր միջուկը, ուսումնական գործունեության տեսակները, որոնք ուսուցման գործընթացում ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել և կիրառվել ուսուցչի կողմից:

---

[4] ՀՀ կառավարության Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման եվ հաստատման կարգը եվ հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու N 439-Ն որոշում

Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ Հասարակագիտություն առարկան պարտադիր ինտեգրված առարկա է հիմնական դպրոցի 8-9-րդ դասարանների և ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների համար: Առարկայի հիմնական նպատակը մարդու և հասարակության վերաբերյալ գիտական պատկերացումներ ունեցող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացու ձևավորումն է: Առարկայի կարևոր նպատակներից է նաև սովորողի կողմից անձնական, հասարակական և ազգային շահերի միասնության, քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործում սեփական մասնակցության, մարդկանց միջև հավասարություն, արդարություն, հանդուրժողականություն, բարեկամություն և խաղաղություն հաստատելու անհրաժեշտության, գենդերային հավասարության և հասարակության մեջ սեռային խտրականության բացառման կարևորմանը:

Առարկան պետք է ներառի գիտելիքներ՝

- Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային ոլորտների մասին.
- մարդու հիմնարար իրավունքների, ազատությունների ու քաղաքացիական հասարակության մասին.
- հասարակական վարքի նորմերի, կանոնների, սովորողների իրավունքների ու պարտականությունների մասին.
- հասարակական և բնական երևույթների փոխկախվածության, աշխարհի միասնականության և բազմազանության մասին[5]:

Առարկայի բովանդակային պարտադիր միջուկ

Առարկայի բովանդակային պարտադիր միջուկը կազմված է առարկայական չափորոշչին համապատասխան: Հարկ է նշել, որ առարկայի բովանդակային միջուկի կոռուպցիային վերաբերող հատվածը փոփոխություն է կրել: Նախորդ տարբերակում Կոռուպցիա ենթաբաժինը ներառված էր Քաղաքացիական հասարակություն մեծ բաժնի մեջ:

Ներկայիս տարբերակում, որը հաստատվել է 2012 թվականին այն տեղափոխվել է Իշխանություն բաժին, նախատեսված է ութերորդ դասարանում սովորողների համար: Այժմ այն ունի հետևյալ տեսքը՝

«Ինչ է իշխանությունը: Իշխանության գործառույթները: Առաջնորդություն և հեղինակություն: Ուժ և իշխանություն: Իշխանության անհրաժեշտությունը, նպատակները:

[5] Հասարակագիտություն առարկայի չափորոշիչ և ծրագիր, ՀՀ կրթության և գիտության նախարարի 28.02.2012թ. –N141 որոշում

Իշխանություն և պետություն: Ժողովրդավարական իշխանություն: Իշխանության տարանջատում: Կոռուպցիա և իշխանության չարաշահում: Իշխանության մարմինների գործունեության թափանցիկություն և վերահսկողություն»:

Սովորողներին ներկայացվող պահանջները

Ուսումնառության արդյունքում սովորողը պետք է՝

«Իմանա կոռուպցիա հասկացությունը, ներկայացնի կոռուպցիայի պատճառները և ձևերը, թրաֆիքինգ հասկացությունը: Հիմնավորի իշխանության մարմինների գործունեության թափանցիկության ապահովման և դրա նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը: Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կոռուպցիայի դեպքեր նկարագրի և հիմնավորի դրանց բացասական ազդեցությունը տվյալ ոլորտի զարգացման վրա: Վերլուծի կոռուպցիայի և թրաֆիքինգի առնչությունները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում»[6]:

Նախ և առաջ, տարակուսելի է «Կոռուպցիա և թրաֆիքինգ» հասկացությունների միավորումը, ինչն իր արտահայտությունն է գտել նաև դասագրքերում:

Այս ձևակերպման պատճառով, ինչպես այս հետազոտության ժամանակ անցկացված ֆոկուս խմբերի, այնպես էլ սովորողների հետ ավելի վաղ տեղի ունեցած հանդիպումների ժամանակ հաճախ՝ ի՞նչ է կոռուպցիան հարցին ստացվել է՝ «թրաֆիքինգ» պատասխանը:

Հասարակագիտություն առարկայի գրքերի հեղինակներից մեկի հետ հարցազրույցից պարզ դարձավ, որ այս կետը չափորոշիչում ավելացվել է վերջին պահին, առանց քննարկումների՝ ի կատարումն որոշ միջազգային պարտավորությունների, այդ պատճառով այն մնացել է արհեստական և նույն կերպ իր արտահայտությունն է գտել դասագրքերում:

Հետազոտվող թեմաների մասին պահանջները սահմանափակվում են միայն այս դասարանով, բարեվարքության, հաշվետվողականության մասին որևէ հիշատակում չկա ոչ մի դասարանի բաժիններում: Ընդհանուր իշխանություն բաժնի համար նախատեսվում է ընդամենը 9 ժամ՝ ներառյալ կրկնությունները և ամփոփումը:

Թեև այս հետազոտության ուսումնասիրության առարկայից դուրս է, այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել, որ առարկայական չափորոշչի գրականության բաժինը պարունակում է բավականին հին նյութեր, ավելին՝ տասից ավելի ռուսալեզու գրականություն[7], որոնց նպատակահարմարությունը ՀՀ-ում հաստատված առարկայական չափորոշչի մեջ այնքան էլ հասկանալի չէ:

---

[6] Նույն տեղում

[7] Հասարակագիտություն առարկայի չափորոշիչ և ծրագիր, ՀՀ կրթության և գիտության նախարարի 28.02.2012թ. –N141 որոշում

Ուսուցչի մեթոդական ձեռնարկ

Դասապրոցեսի կազմակերպման համար հաջորդ կարևոր փաստաթուղթը ուսուցչի մեթոդական ձեռնարկն է: Մեթոդական ձեռնարկը կազմված է <Հասարակագիտություն > առարկայի չափորոշչին, ծրագրին և դասագրքերին համապատասխան:

Ուսուցչի մեթոդական ձեռնարկի համապատասխան բաժնում՝ դասապրոցեսի պլանավորման համառոտագրում, նշված է, որ սովորողը պետք է՝

- Իմանա կոռուպցիա և թրաֆիքինգ հասկացությունները, ներկայացնի կոռուպցիայի պատճառները:
- Հիմնավորի թափանցիկության ապահովման և դրա նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը,
- Վերլուծի կոռուպցիայի և մարդավաճառի ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա
- Կարողանա ուսումնասիրել և գնահատել իշխանության որևէ մարմնի հաստատության գործունեությունը:

Որպես մեթոդ առաջարկվում է կիրառել՝

- Մտագրոհ
- Համառոտ դասախոսություն
- Խմբային աշխատանք

Որպես լրացուցիչ նյութ առաջարկվում է՝ «Անահիտ» ուսումնասիրությունը, որը Ղ. Աղայանի համանուն հեքիաթի մշակումն է և ներկայացվում է որպես մարդկանց շահագործման գրական օրինակ:

Ուսուցչի մեթոդական ձեռնարկում առաջարկվում է հինգ րոպե հատկացնել մտագրոհի՝ ինչ է կոռուպցիան թեմայով, քսանհինգ րոպե խմբային գործնական աշխատանքի միջոցով փորձել հասկանալ, որոնք են կոռուպցիայի առաջացման պատճառները և հետևանքները և տասնհինգ րոպե այն դասարանին ներկայացնելու ու քննարկելու համար:

Ուսուցչի ընթերցանության համար նախատեսված հավելյալ նյութը նվիրված է թրաֆիքինգին և ձեռնարկում դրա պատճառներից մեկը համարվող «վիկտիմության»ը, ինչպես նաև թրաֆիքինգի զոհ չդառնալուն ուղղված գործնական խորհուրդներին[8]:

Կոռուպցիայի տեսակների, հաշվետվողականության և թափանցիկության մասին որևէ հավելյալ ընթերցանության նյութ այստեղ չկա:

---

[8] Հասարակագիտություն 8-9 դասարանների ուսուցչի ձեռնարկ, ՀԱՆԳԱԿ, 2013

Դասագրքերի նման, ձեռնարկում ևս հաջորդող առնչակից բաժիններում չկա որևէ անդրադարձ այս թեմաներին:

Որքանով է մեթոդական ձեռնարկը օգնում ուսուցիչներին միանշանակ չէ:

Հարցված ուսուցիչները բոլորը փաստում էին, որ ունեն մեթոդական ձեռնարկ, որը օգնում է պլանավորել դասաժամերը՝ գրել պլանը, սակայն դժվարանում էին հիշել կոնկրետ թեմաների մասին այդ ձեռնարկում առաջարկվող մեթոդները:

Հարցված ուսուցիչները փաստում էին, որ ժամանակ չեն ունենում հետևել մեթոդական ձեռնարկներին, առավել ևս այդտեղ առաջարկվող հավելյալ նյութերին, հատկապես բարձր դասարաններում, երբ դասագրքի տեքստն արդեն իսկ չափազանց հագեցած է իրավական նորմերով:

> «*Առանց այն էլ ուսուցչի ծանրաբեռնվածությունը ծանր է, լինել հասարակագիտության ուսուցիչ նշանակում է գիտելիք ունենալ բոլոր բնագավառների մասին, անհնար է ամեն ինչի մասին խորը գիտելիքներ ունենալ*»:
>
> *Ուսուցիչ, Արարատի մարզ*

Երբ հարցվող ուսուցիչներին և աշակերտներին խնդրել ենք նկարագրել «կոռուպցիայի մասին» իրենց դասը, որևէ մեկը իր պատասխանում չի նշել ձեռնարկում առկա մեթոդական եղանակները, բացի դասախոսությունից և հարց ու պատասխանից:

Օբյեկտիվության համար պետք է նշել, որ սահմանված ժամաքանակը և առաջարկվող նյութը իսկապես համադրելի չեն, իրատեսական չի հասցնել կիրառել առաջարկվող մեթոդները:

Դասագրքեր

Ինչպես արդեն նշվել է, առարկայական դասագրքերը մշակվում են առարկայի չափորոշչի, բովանդակային պարտադիր միջուկի, առարկայական ծրագրի հիման վրա: Այս հետազոտության շրջանակում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ «Հասարակագիտություն» առարկայի 8-12 րդ դասարանների դասագրքերը ստեղծվել են՝ հիմնականում պահպանելով չափորոշչի և ուսումնական պլանի նոմինալ պահանջները:

ՀՀ ԿԳՆ (այժմ՝ ՀՀ ԿԳՍՄ) նախարարության կողմից հաստատված են յուրաքանչյուր դասարանի համար երկուական դասագիրք՝ տարբեր հեղինակային կազմի և հրատարակչության կողմից մշակված: Յուրաքանչյուր դպրոց ինքն է ընտրում, թե որ դասագիրքը կիրառի: Այդ պատճառով հետազոտությունը ուսումնասիրել և համեմատել է բոլոր դասագրքերը:

Ինչպես արդեն նշվել է, պետական և առարկայական չափորոշիչներից ու առարկայական ծրագրերը ուսումնասիրելիս պարզ է դարձել, որ կոռուպցիային առնչվող

բաժինները պետք է ընդգրկվեն 8-րդ դասարանի դասագրքերում, ուստի առավել մանրամասն կանդրադառնանք այդ դասագրքերին: Այնուամենայնիվ մյուս բոլոր դասագրքերը ևս ուսումնասիրվել են՝ պարզելու արդյոք կոռուպցիային դրա որոշ տեսակներին, բարեվարքությանն ու հաշվետվողականությանը անդրադարձ կա առնչակից այլ թեմաներում, ինչպես օրինակ քաղաքագիտության, տնտեսագիտության, կառավարման համակարգին նվիրված գլուխներում:

Ուսումնասիրված բոլոր դասագրքերում առկա առաջադրանքների հիմնական տեսակներն են հարցադրումներն ու գործնական աշխատանքները: Այս հարցադրումները ևս շատ կարևոր են, քանի որ սովորողի վերլուծական միտքը ուղղում են կոնկրետ առաջարկվող հարցերին:

8-րդ, 9-րդ դասարանների դասագրքերի 80%-ում դասին զուգահեռ գրքերում տեղադրված են նկարներ, 10-12 դասարաններում՝ ավելի քիչ, ինչը թեև տարբեր հեղինակների մոտ տարբերվում է:

Դասագրքերի քննության առաջին փուլում պարզ դարձավ, որ այդ նկարների ու պատկերների մեծ մասը չունի տեղեկատվական բնույթ: Հատկանշական է, որ որոշակի բաժիններում, ինչպես օրինակ՝ բազմակուսակցական համակարգը թեմայում («Հասարակագիտություն 11») դասն ուղեկցող նկարում ՀՀ-ում գործող կուսակցություններից միայն Հայաստանի հանրապետական կուսակցության համագումարի նկարն է առկա դասագրքում: Իսկ հնագույն կուսակցությունների մասին խոսելիս էլ միայն դաշնակցության զինանշանը:[9]

26-ին խորհրդարանի կողմից ընդունվեց «Հասարակական-քաղաքական
կերպությունների մասին» օրենքը: Օրենքի ը
ազդարարեց անցում բազմակուսակցակա
կարգին: Ավանդական կուսակցություններ
հանրապետությունում գրանցվեցին նաև բ
այլ կուսակցություններ և հասարակական-
կան կազմակերպություններ: Նրանք ակ
ներգրավվեցին մեր երկրում նոր, ժողովրդավ
հասարակության հիմքերի ստեղծմանը:

«Հասարակագիտություն 11», էջ 188

Հարկ է նշել, որ չափորոշիչ – դասագիրք համադրում կատարելիս այնուամենայնիվ որոշակի անհամապատասխանություններ նկատվեցին, մասնավորապես՝ չափորոշիչներում նշված արժեքները, ինչպես նաև գիտելիքը, որոշակի տեղերում առկա չեն գրքում, կան թեմաներ, որոնք առկա են չափորոշիչների մեջ, իսկ դասագրքերի նոր տարբերակներում չկան, ինչպես նաև դասագրքերում առկա հարցադրումների մի ծանր մասը նպաստում է միայն տեղեկատվությունն անգիր անելուն, այն դեպքում, երբ չափորոշիչները պահանջում են այլ վերջնարդյունք, օրինակ՝ 11-րդ դասարանի համար նախատեսված «Ինչ է ուսումնասիրում քաղաքագիտությունը» բաժնում բ. Մակարդակի համար գրված է, որ սովորողը պետք է «գնահատի իշխանության ճյուղերի բնականոն

[9] Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Գյուլբուդաղյան Ա., «Հասարակագիտություն 11», 2015, էջ 188

հարաբերակցության նշանակությունը իրավական պետության մեջ», այնինչ դասագրքի նույն հատվածում հարցերը հետևյալն են. «Ինչ է պետությունը, որոնք են պետական իշխանության հատկանիշները, ինչպիսին է ժողովրդի և պետության ինքնիշխանության հարաբերակցություն»[10]:

Հաճախ հանդիպող օրինակ է, երբ չափորոշչում առկա բոլոր պահանջները կատարելու համար հեղինակները թեմայի վերջում մեկ նախադասությամբ փորձում են թվարկել այն ամենը, ինչի մասին չեն խոսել բուն նյութի մեջ: Այսպես օրինակ՝ քանի որ չափորոշչում առկա է պահանջ կոռուպցիայի տեսակների մասին, հեղինակներից մեկը վերջում գրում է մի տողով՝ «կոռուպցիայի տեսակներից են կաշառք տալը, ստանալը, իշխանական լիազորությունների առևտուրը, դրա օգտագործումն անձնական օգուտ ստանալու համար և այլն»:[11]

Այժմ անդրադառնանք այս գրքերին առանձին - առանձին՝ վերլուծելու նրանց համապատասխանությունը չափորոշչին և մեր կողմից հետազոտվող հասկացությունների ներկայացվածությունը:

Այսպես «Հասարակագիտություն 8» /Ա. Գյուլբուդաղյան, Կ.Հարությունյան, Տ.Թովմասյան, Զանգակ հրատ., 2013 / գրքում կա տեղեկատվություն կոռուպցիա բառի նշանակության և հասկացության մասին, կա պատմական փոքրիկ ակնարկ՝ հնագույն աշխարհի կոռուպցիոն երևույթների մասին: - (բավարարում է Ինչ է կոռուպցիան հարցին)

Պատճառներ - Որպես կոռուպցիայի պատճառ նշված է մարդկային ագահությունը, այսինքն՝ կոռուպցիայի հիմնական «մեղքը» բարդված է միայն մարդկային հատկանիշների վրա՝ անտեսելով սոցիալական, իրավական, համակարգային և քաղաքական դրդապատճառները, որոնք այսօր ամբողջ աշխարհում համարվում են ավելի կարևոր գործոններ: Մարդը չի ծնվում հակված լինելով կոռուպցիայի դիմելուն, տարբեր համակարգերում, երկրներում ապրող մարդիկ տարբեր վարքագիծ են ցուցաբերում: Սա ապացուցված է տարբեր երկրների օրինակներով:

Հետևանքներ- Բուն տեքստում թվարկված են կոռուպցիայի մի քանի կարևոր հետևանքներ, սակայն առնվազն տարակուսելի է բաժնի վերջում առաջարկված գործնական առաջադրանքը, ըստ որի սովորողը պետք է թվարկի կոռուպցիոն երևույթներ՝ նշելով դրանց թե՛ բացասական, թե՛ դրական կողմերը:

Այսպիսի հարցադրումները խթանում են սովորողների կողմից քննարկումների ընթացքում երբեմն արտահայտված այն վտանգավոր կարծիքը, թե կոռուպցիան որոշ դեպքերում նպատակին հասնելու «հեշտ միջոց է»: Ուսուցիչները նշում են, որ կարճ ժամանակի պատճառով հնարավոր չի լինում լիարժեք անդրադառնալ առաջադրանքներին: Այս դեպքում նման ձևակերպումները կարող են ուղղակի մնալ ենթագիտակցության մեջ:

---

[10] Նույն տեղում , էջ 152

[11] Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., «Հասարակագիտություն 8», 2013, էջ 147

Կոռուպցիայի տեսակներ – Գրքում թվարկված են ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ ՀՀ ՔՕ) առկա կոռուպցիոն դրսևորումները: Այստեղ գլխավոր խնդիրը խիստ իրավական լեզուն է, քանի որ այս մասը ուղղակի նույնությամբ կրկնում է ՀՀ ՔՕ դրույթները՝ առանց հավելյալ բացատրությունների, ինչը դժվարացնում է ընկալումը, բացի այս բաժնի լեզուն խիստ տարբերվում է այլ բաժինների ավելի պարզ, պատմողական ոճից: Բացի այդ, այս մասը, թերևս պետք է նախորդեր հետևանքներին:

Այս բաժինները հիմնականում ուղեկցվում են պատմական նկարներով, բաժիններից մեկում պատկերված է քարտեզ, որտեղ նշված է, թե այն ցույց է տալիս կոռուպցիայի մակարդակը տարբեր երկրներում (իրականում՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ, Կոռուպցիայի ընկալման համաթվի քարտեզ), սակայն նկարից պարզ չի դառնում թե տարբեր գույները և դրանց համապատասխան միավորները ինչ են նշանակում:

Թափանցիկություն և հանրային վերահսկողություն (չափորոշչի պահանջ)– այս մասին գրքում որևէ անդրադարձ չկա:

Հաշվետվողականություն, բարեվարքություն – անդրադարձ չկա:

8-րդ դասարանի համար նախատեսված մյուս դասագրքում /Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Տիգրան Մեծ, 2013/ Կոռուպցիա և Թրաֆիքինգ ընդհանուր վերնագրի տակ կարճ սահմանված է կոռուպցիան:

Կոռուպցիայի տեսակներ - Թվարկված են կոռուպցիայի որոշ դրսևորումներ, սակայն դրանցից միայն նեպոտիզն է բացատրվում, մնացածը միայն թվարկվում են:

Պատճառներ - ներկայացված են կոռուպցիայի առաջացման «մարդաբանական, պատմամշակութային, սոցիալ-տնտեսական և պետաիրավական պատճառները»: Այս հատվածը շատ ավելի մանրամասն է, քան մյուս դասագրքում, սակայն կրկին որոշ հիմնավորումների հետ կարելի է վիճել: Օրինակ՝ այլ երկրների տիրապետության տակ գտնվելը, ի հակադրություն սրան կարող ենք բերել տարբեր երկրների, ասենք՝ Նոր Զելանդիայի օրինակը, որը երկար տարիներ գաղութացված պետություն լինելով այսօր ըստ ԹԻ Կոռուպցիայի ընկալման համաթվի ամենաքիչ կոռումպացված երկիրն է: Կարծում ենք ավելի կարևոր է շեշտադրել համակարգային, պետաիրավական խնդիրները, քան մարդաբանական կամ «մենթալիտետային» հարցերը:

Թափանցիկություն և հանրային վերահսկողություն – վերջին կարճ բաժնում որպես կոռուպցիայի հաղթահարման ուղիներ առաջարկվում է նվազագույնի հասցնել պաշտոնյաների և մարդկանց շփումը, կառավարումը դարձնել թափանցիկ, վերահսկել պաշտոնյաների եկամուտները:

Գիրքը, կարծես թե, անդրադառնում է չափորոշչի բոլոր պահանջներին, սակայն նյութի բովանդակությունը չափազանց թերի է, հաճախ մեկ նախադասությամբ նշելով բոլոր այն հասկացությունները, որ պահանջում է չափորոշիչը:

Այս բաժիններում թեմատիկ ուղեկցող նկարներ առկա չեն:

9, 10, 11, 12 դասարանների դասագրքերի վերլուծությունը ցույց տվեց, որ այս հետազոտությամբ ուսումնասիրվող հասկացությունների մասին անդրադարձը հիմնականում արտահայտված է 8-րդ դասարանի դասագրքերում՝ ի կատարումն չափորոշչի պահանջի: Մյուս դասարանների առնչակից բաժիններում ու թեմաներում ինչպես օրինակ քաղաքագիտություն, տնտեսագիտություն, կառավարման համակարգ, որևէ բովանդակային անդրադարձ չկա այս երևույթներին, անգամ այնպիսի թեմաներում, որոնք ուղիղ առնչություն ունեն կոռուպցիոն ամենատարածված երևույթների հետ:

Այսպես օրինակ՝ 9-րդ դասարանի դասագրքում «Ընտրություններ» բաժնում օրինակ չի խոսվում քաղաքական կոռուպցիայի, մասնավորապես ընտրական կոռուպցիոն երևույթների, օրինակ ընտրակաշառքների, ադմինիստրատիվ ռեսուրսի չարաշահման մասին, փոխարենը գրքում առկա է հռետորական և ոչ հստակ նախադասություն՝ «կուսակցությունների մեջ քաղաքական պայքարը պետք է իրականանա քաղաքակիրթ ձևով, պահպանվեն բարեկրթության կանոնները»:

Իհարկե, հաշվի առնելով սահմանափակ ժամաքանակը՝ չի կարելի ակնկալել անդրադարձ բոլոր երևույթներին, բայց համեմատության համար նշենք, որ մի ամբողջ էջ նվիրված է տեղամասային կենտրոնների տեղին և համարակալման կարգին, որը գործնականում քաղաքացու համար որևէ կիրառելի նշանակություն չունի, քանի որ տեղամասային կենտրոնների բաշխման և համարակալման համար պատասխանատու են ՏԻՄ մարմինները, իսկ հնարավոր, թեև գործնականում գրեթե չհանդիպող, խախտումները կարող են հետաքրքրել միայն մասնագիտական դիտորդություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Մեկ այլ օրինակ 10-րդ դասարանի դասագրքում՝ Տնտեսական իրավունքներ բաժնում, մի նախադասությամբ նշվում է, որ պետությունը պետք է պայքարի բոլոր մասնավոր մենաշնորհների դեմ, սակայն դրանից առաջ չի բացատրվում, թե ինչ է մենաշնորհը, ինչպես է առաջանում կամ ինչ հետևանքներ է ունենում:

Նույն դասարանի մեկ այլ հեղինակի գրքում՝ Տնտեսագիտություն բավականին մեծ բաժնում, տնտեսական կոռուպցիայի, կամ կոռուպցիայի՝ տնտեսության վրա ունեցած ազդեցության մասին որևէ բան չկա:

Հաշվետվողականության, հանրային վերահսկողության մասին բովանդակային անդրադարձ չկա ոչ իշխանության մարմինների, ոչ հանրային քաղաքականության, ոչ ժողովրդավարության մասին բաժիններում: Միայն 2 առանձին տող՝ 9-րդ դասարանի դասագրքերում ընտրությունները դիտարկում են որպես հաշվետվողականության միջոց, «քանի որ ընտրողները հաջորդ անգամ կարող են չընտրել նրան»[12]: Մյուս դասագրքում

[12] Գյուլբուդաղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., Հասարակագիտություն 9, Զանգակ, 2013

նշվում է՝ «ընտրովի մարմինները հաշվետու են ժողովրդի առաջ», «հանրային կարծիքը հանրային վերահսկողության արդյունավետ միջոց է»[13]

Բարեվարքության և/կամ օրինավորության մասին որևէ խոսք չկա:

Ստացվում է, որ այս երևույթների ուսումնասիրությունը ինքնանպատակ է դառնում, այն ավատվում է համապատասխան տարում չափորոշչի անվանական պահանջը կատարելով: Մեկ անգամ 8-րդ դասարանում ընդհանուր անդրադարձ կատարելով այնպիսի բազմաբնույթ ու բարդ թեմաների, ինչպես կոռուպցիան է, անգամ եթե այն լինի հագեցած բովանդակությամբ, հնարավոր չէ սովորողի մոտ ստեղծել մնայուն գիտելիք, պատկերացում այս երևույթների մասին, առավել ևս՝ դաստիարակել վերաբերմունք:

Դասագրքերի մյուս խնդիրը օգտագործվող լեզվի չափազանց բարդ լինելն է: Սրա մասին միաձայն նշել են, թե՛ հարցված սովորողները, թե՛ ուսուցիչները: Սկսած 9-րդ դասարանից՝ կտրուկ անցում է կատարվում խիստ իրավական բառապաշարի, առանձին գլուխներ և բաժիններ, ուղղակի արտատպում են օրենքի դրույթները՝ առանց բացատրելու և մեկնաբանելու դրանք: Սա դժվարացնում է նյութի բովանդակությունը հասկանալը:

«Իրավունքի տերմիններ ու օրենքներ ենք անգիր անում, որպեսզի հանկարծ որևէ բառ չսխալվենք աշակերտներին ներկայացնելիս»:

Ուսուցիչ, Երևան

Հարցվածների մեծ մասը նշում էր, որ քննարկելու կամ բանավիճելու ժամանակ չի մնում, քանի որ տեքստերը շատ են, դասաժամանակը հերիքում է միայն վերապատմելուն:

Հարկ է նշել, որ բացի բարդությունից սա առաջացնում է մեկ այլ խնդիր, որոշ բաժիններ ներկայացնում են արդեն հնացած և գործածությունից դուրս եկած օրենքներ ու նորմեր: Ամենավառ օրինակը թերևս 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով ամրագրված էական փոփոխություններն են, ինչը մեծ բաց է ստեղծում իրականության և դասագրքի միջև:

Չափազանց կարևոր է շեշտել նաև Կրթության հատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսուցման հարցը: Քանի որ ՀՀ-ն անցնում է ներառական կրթության, ապա պետք է հաշվի առնել, որ ուսուցչին ոչ միայն մեթոդաբանական օգնություն է պետք գալու, այլ նաև նյութի ավելի պարզեցված տարբերակը, որը կօգնի նրան առաջնորդել դասը ԿԱՊԿՈՒ սովորողների համար:

Հարցվածների մեծ մասը հատկապես նշում էր 10 և 11-րդ դասարանի դասագրքի պարզեցման անհրաժեշտության մասին:

[13] Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Հասարակագիտություն 9, Տիգրան Մեծ, 2013

«Տեքստերում նույն միտքը կրկնվում է տարբեր բարդ ստորադասական երկար – բարակ նախադասություններով, մի քանի անգամ պետք է կարդաս, որ հասկանաս՝ նույն բանն էր»:

11-րդ դասարան, սովորող, Երևան

Բնական է, որ գրքի ավելորդ բարդությունը բերում է աշակերտների կողմից այն չհասկանալուն, անհնարին է դարձնում բանավեճերը, քննարկումները, վերլուծական և քննական մթնոլորտը, հանգեցնում է առարկայի նկատմամբ հետաքրքրության կորստի: Ուսուցիչների և սովորողների հետ քննարկումները ևս մեկ անգամ փաստեցին, որ ավագ դասարանների դասագրքերը պետք է փոփոխվեն, խիստ իրավական լեզուն պետք է փոխվի, առանձին բաժիններ և գլուխներ կրկնվում են: Այս ամենը պատասխանում է այն մտահոգությանը, թե կոռուպցիային, բարեվարքությանը, հաշվետվողականությանն անդրադառնալու ժամանակ և հնարավորություն չկա:

Դասագրքերի բովանդակային ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բաժինների և ընտրված թեմաներից շատերի մեջ հղումները բացակայում են և ստացվում է, որ անգամ ցանկության առկայության պարագայում սովորողը կդժվարանա գտնել համապատասխան լրացուցիչ նյութեր ու գրականություն, ավելի պարզ ասված՝ բացակայում է առաջարկվող հավելյալ գրականության ցանկ ասվածը: Ավելին՝ անծանոթ տերմինների կիրառության դեպքում բացատրությունները կամ բացակայում են, կամ էլ տեքստերի մեջ խցկված են, ինչն էլ աշակերտներին չի օգնում անծանոթ բառերն ու արտահայտությունները հասկանալ ու հիշել:

Ընդհանուր առմամբ հասարակագիտություն առարկայի մասին խոսելիս հարկ է անդրադառնալ այն հանգամանքին, որ այս առարկան հաճախ դիտարկվում է որպես հավելյալ առարկա, ու «մատների արանքով» է ուսուցանվում: Սրան նպաստում են մի քանի հանգամանքներ, որոնցից որոշները արդեն նշել ենք: Ամենակարևոր պատճառներից մեկը ուսուցիչների հարցն է, որը թեև դուրս է այս հետազոտության շրջանակներից, այնուամենայնիվ կարիք ունի անդրադարձի: Հասարակագիտություն առարկան հիմնականում դասավանդում են այն ուսուցիչները, որոնք ունեն դասաքանակի պակաս, ինչը լրացվում է հասարակագիտության հաշվին, հիմնականում այս առարկաները դասավանդում են պատմության կամ աշխարհագրության ուսուցիչները: Հաշվի առնելով հասարակագիտություն առարկայի բաժինների բազմազանությունը՝ տնտեսագիտություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն, դժվար է պատկերացնել, որ մեկ ուսուցիչը՝ լինի պատմության կամ այլ առարկայի մասնագետ, կարող է լիարժեք տիրապետել և մատուցել այս բարդ թեմաները սովորողներին:

Որպես գործոն, պետք չէ մոռանալ նաև ավարտական դասարաններում սովորողների ծանրաբեռնվածությունը՝ կապված ընդունելության քննություններին պատրաստվելու հետ և այն, որ հասարակագիտությունը ընդունելության և ավարտական քննությունների ցանկի մեջ չկա:

Հաշվի առնելով բովանդակային քննության արդյունքները՝ ֆոկուս խմբերում (ուսուցիչներ և աշակերտներ) հարցեր տրվեցին նաև դասագրքերի բովանդակության և բարդության վերաբերյալ: Ուսուցիչները փաստում են, որ որոշ դասագրքեր՝ հատկապես 11-րդ դասարանի դասագիրքը, գրված է բավականին բարդ ակադեմիական լեզվով, և այդ անցումը պարզ լեզվից իրավական լեզվի կատարվում է միանգամից ոչ թե աստիճանաբար, երբեմն նույնիսկ ուսուցիչների համար դժվար է լինում հասկանալ դասը:

Հարցված ուսուցիչները բողոքում էին դասագրքերի բարդ և ակադեմիական լեզվից:

Այսպիսով՝ ամփոփելով՝ կարող ենք ասել, որ դասագրքերի հետ կապված հիմնական խնդիրներն են՝ բարդությունը և բովանդակային տեսանկյունից միայն ինֆորմացիոն բնույթի լինելը, որոշ թեմաների մասին ոչ լիարժեք, երբեմն միակողմանի, թերի տեղեկատվությունը կամ անգամ դրա բացակայությունը, դասագրքերում առկա առաջադրանքները չեն նպաստում ո՛չ քննական և ո՛չ էլ վերլուծական մտածողությանը, դասագրքերում առկա նյութը չի համապատասխանում հատկացված ժամաքանակին:

Հարկ է նշել նաև դասագրքերի ստեղծման գործընթացում առկա լուրջ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների մասին: Թեև տվյալ հարցը այս հետազոտության թեմաներից դուրս է, այնուամենայնիվ այն ուղիղ ազդում է դասագրքերի որակի վրա[14]:

Դասագրքերի դերը չափազանց կարևոր է, քանի որ հենց դասագիրքն է այն միակ փաստաթուղթը, որի հետ շփվում է սովորողը և դասագիրքն է այն ուղենիշը, որով գործնականում առաջնորդվում է ուսուցիչը ամեն օր: Դասագրքերի որակից՝ լեզվի մատչելիությունից, ուղերձների ձևակերպումից, զուգահեռ նկարներից, առաջադրանքներից և հարցադրումներից է ձևավորվում գիտելիք և վերաբերմունք տվյալ թեմայի և երևույթի նկատմամբ:

Միջազգային փորձի ուսումնասիրություն

Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD)՝ երկրները, որոնք ցանկանում են երիտասարդներին տալ գիտելիքներ բարեվարքության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ, օգտագործում են տարբեր գործիքներ այն ներդնելու համար: Ինչպես օրինակ՝

- եղած կրթական ծրագրերի մեջ փոփոխությունների կատարում,
- շահառու խմբերի և կազմակերպությունների աջակցություն,
- տարբեր շահառուների և հակակոռուպցիոն կազմակերպությունների համագործակցություն»[15]:

---

[14] Կոռուպցիոն ռիսկերի գնահատում ՀՀ հանրակրթության բնագավառում, ՀՔԻ, ԹԻՀԿ. 2017, https://transparency.am/hy/publications/view/159

[15] “Education for Integrity”, page 11, https://www.oecd.org/governance/ethics/education-for-integrity-web.pdf

Ըստ նույն կազմակերպության՝ այն երկրները, որոնք նախընտրում եմ հակակոռուպցիոն կրթական ծրագրեր ներդնել իրենց կրթական պրոցեսում, դրա նկատմամբ դրսևորում են երեք մոտեցում.

1. «Ընդգրկում են հակակոռուպցիոն կրթական ծրագրերը դպրոցական ծրագրերում՝
   - դպրոցական ծրագրերում ավելացնելով հակակոռուպցիոն կրթության մոդուլներ,
   - վերակազմելով կրթական ծրագրերը, հրատարակելով նոր ուսումնաօժանդակ նյութեր,
   - ստեղծելով կրթողների և կրթվողների համար հատուկ ձեռնարկներ՝ խթանելով նրանց հակակոռուպցիոն կրթական ձեռքբերումները:
2. Տալիս են հակակոռուպցիոն կրթական ծրագրեր հատուկ հակակոռուպցիոն մարմինների կողմից:
3. Տալիս են հակակոռուպցիոն կրթություն արտադասարանական կրթության միջոցով»[16]:

Ուսումնասիրելով տարբեր երկրներում հակակոռուպցիոն կրթության մեթոդները և ձևերը, կարելի է նկատել մի քանի հստակ տենդենց.

- **Հակակոռուպցիոն կրթությունը մեծամասամբ ներկայացվում է այլ առարկաների շրջանակում:**
- **Այն սկսվում է վաղ հասակից ավելի պարզ թեմաների քննարկումներով և ըստ տարիքի բարդանում:**
- **Շեշտը դրվում է դրական կոնցեպտների վրա, այսպես օրինակ՝ ավելի շեշտադրվում է ոչ թե կոռուպցիայի վնասակար ու քայքայիչ լինելը, այլ խոսվում է բարեվարքության և օրինականության կարևորության մասին:**
- **Այն միջդիսցիպլինար բնույթ ունի, շեշտադրվում է կապը այլ ուսումնասիրվող երևույթների հետ տարբեր առարկաների շրջանակներում:**

Ստորև կներկայացնենք մի քանի երկրների փորձը՝ առավել մանրամասն:

Ինդոնեզիա

Ինդոնեզիան, ըստ Ժողովրդավարության ինդեքսի, համարվում է մասնակի ժողովրդավար երկիր: Աշխարհի երկրների ցանկում այն զբաղեցնում է 65-րդ տեղը՝ 6.39 ինդեքսով[17]: Ըստ կոռուպցիայի ընկալման համաթվի՝ 2015 թվականի նախագահական ընտրություններից հետո երկրում իրավիճակը կտրուկ փոխվեց, և կոռուպցիայի նկատմամբ

---

[16] *Նույն տեղում*, էջ 12:

[17]Ժողովրդավարության համաթիվ 2018, page 42, http://www.eiu.com/Handlers/WhitepaperHandler.ashx?fi=Democracy_Index_2018.pdf&mode=wp&campaignid=Democracy2018

անհանդուրժողական վերաբերմունքի մթնոլորտում աշխարհի երկրների ցանկում 107-րդ տեղից դարձավ 89-րդը[18]:

Չնայած որ Ինդոնեզիայում կոռուպցիայի նկատմամբ պետական մակարդակով ավելի մեծ պայքար գնացել է 2014-15 թթ-ից սկսած՝ այնուամենայնիվ, քայլեր սկսել են ձեռնարկվել դեռևս 2005-06 թթ-ին: Այս ժամանակահատվածում խնդիր էր դրված, թե ինչպես վերացնել կոռուպցիան՝ պետականից մինչև տարածքային (local): Ստեղծվեց «Կոռուպցիան վերացնող հանձնաժողով», որն ի սկզբանե ուներ ոչ այնքան կանխարգելիչ, որքան պատժիչ գործառույթներ, և այս խնդիրը ուներ բացեր երևույթի հետագա զարգացման ու կանխարգելման տեսանկյունից: Հետազոտողների մի խումբ հանդես եկավ կարծիքով, որի համաձայն կոռուպցիոն երևույթների վերացման համար պետք է փոխել քաղաքացիների մենթալիտետը, հատկապես երբ վերջիններիս մեջ ֆեոդալիզմը դեռևս արդիական էր: Ինդոնեզցի մարդաբան Կոենթջարանինգրաթը ասում էր, որ պետք է կոտրել մարդկանց մենթալիտետը, որտեղ անհատն ուզում է լինել հաջողակ՝ առանց հետևելու նորմատիվային օրենքին[19]:

Մարդկանց մենթալիտետը և վերաբերմունքը փոխելու համար որոշվեց օգտագործել կրթությունը: Փորձագետները համոզված էին, որ կրթական հաստատությունները ձևավորում են արժեհամակարգ և տարածում արժեքներ, որոնցից մեկն էլ կարող է լինել բարեվարքությունը: Եվ այն սերունդը, որ նոր է մտնելու կյանք, պետք է վաղ տարիքից անհանդուրժող լինի կոռուպցիայի նկատմամբ: Անցկացվեցին ընտրություններ և արդյունքում մասնակիցների 87%-ը դրական արձագանք տվեց դպրոցական կրթական ծրագրերում հակակոռուպցիոն կրթությունը ինտեգրելուն: Արդյունքում որոշվեց, որ այն պետք է կազմի քաղաքացիական կրթություն առարկայի բաղկացուցիչ մասը:

Այսպիսով՝ հակակոռուպցիոն կրթությունը ինտեգրվել է հանրակրթական ծրագրերում 2006 թվ-ի քաղաքացիական կրթության բաղադրիչի մեջ՝ ներառվելով ավագ դպրոցի սկզբնական և բարձր դասարաններում: Ինդոնեզիայում սա միակ առարկան է, որը ներառում է հակակոռուպցիոն կրթական բաղադրիչը: Ծրագրի սկզբում աշակերտները ստանում են հիմնական գիտելիքներ և փորձում քննել կոռուպցիոն գործերը ու Ինդոնեզիայում առկա իրավական դաշտը՝ պատժելու մեխանիզմները: Բարձր դասարաններում աշակերտները քննական մտածողության միջոցով փորձում են վերլուծել իրադարձությունները և երկրում առկա իրավիճակը՝ հասկանալու համար, թե ինչքանով է պայքարը մասնակցային:

Հակակոռուպցիոն կրթության բովանդակությունը ներդնելու համար Ինդոնեզիան կիրառում է 6 մոտեցում.

---

[18] Կոռուպցիայի ընկալման համաթիվ, 2018, https://www.transparency.org/cpi2018/

[19] Komalasari K. and Saripudin D., Integrating anti-corruption education in school's activities, https://pdfs.semanticscholar.org/db3a/2df74f03ec4d9bd04610c6b9617f8e108896.pdf

1. **Խնդրի հիմքի վրա ուսուցանում** – այս մեթոդի կիրառման համար օգտագործվում են իրական աշխարհի խնդիրները, որպեսզի սովորողի մոտ խորանա քննական մտածողությունը և ձեռք բերեն խնդիրներ լուծելու հմտություններ: Նրանց տրվում են նաև այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար պետք է օգտագործվեն այլ առարկաներից գիտելիքներ:

2. **Գործնական առաջադրանքների հիման վրա ուսուցում** - այս մոտեցումը թույլ է տալիս ուսանողներին ինքնուրույն աշխատել և խորացնել իրենց գիտելիքները խնդրի շուրջ:

3. **Աշխատանքի վրա հիմնված ուսուցանում** - դասավանդման այս մոտեցումը հնարավորություն է տալիս ուսանողներին օգտագործել աշխատանքային միջավայրերը դպրոցական առարկայի նյութի մարսման համար: Այս մեթոդի միջոցով քննարկվում են նաև այնպիսի թեմաներ, որոնք արծարծվում են նաև աշխատավայրերում:

4. **Ծառայության մատուցման վրա կատարվող ուսուցում** – մեթոդ է, որով սոցիալական ծառայությունները ինտեգրվում են կրթական ծրագրերում և դպրոցներում, և աշակերտները դրա հիման վրա են գիտելիք ստանում:

5. **Համագործակցային ուսուցանում** – փոքր խմբերի միջոցով, համագործակցային ուսուցում, որը թույլ է տալիս հասնել սպասված արդյունքին:

6. **Արժեհամակարգային ուսուցում** – արժեքների քննարկում և տարբեր կողմերից վերլուծություն:

Կան որոշակի արժեքներ, որոնք դասավանդվում են այս հակակոռուպցիոն կրթական ծրագրի ընթացքում՝ արդարություն, աշխատասիրություն, կարգ ու կանոն, քաջություն, պատասխանատվություն, պարզություն և հոգատարություն: Սովորողներին հենքային գիտելիքներ տալու համար, ծրագիրը մատուցվում է շատ ավելի պարզ լեզվով՝ տալով տերմինների բացատրություն:

Հարկ է նշել, որ համաձայն Ժողովրդավարության ինդեքսի տարբեր տարիներին հրապարակված զեկույցների, Ինդոնեզիայում 2007 թվականի համեմատ քաղաքական մասնակցությունը բարձրացել է 2018-ին հասնելով 6.67, նախկին 5.00-ի փոխարեն: Պնդել, որ կրթությունը՝ մասնավորապես քաղաքացիական կրթությունը, ուղղակի ազդեցություն է ունեցել քաղաքական մասնակցության վրա, չենք կարող, սակայն այն դիտարկել որպես անուղղակի ազդակ, հնարավոր է: Սրա մասին կարող է վկայել նաև Կոռուպցիայի ընկալման համաթիվը, որի համաձայն 2010 թվ-ին Ինդոնեզիան աշխարհի երկրների ցուցակում 110-րդն էր 2.8 համաթվով[20], իսկ 2018-ի տվյալներով այն 89-րդն է (38 համաթվով):

[20] Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2010, https://www.transparency.org/cpi2010/results:

Ռուսաստանի փորձը

Ռուսաստանը, ունենալով 28 միավոր, կոռուպցիայի ընկալման համաթվով գտնվում է 180 երկրներից 138-երորդ տեղում: Համաձայն կոռուպցիայի դեմ պայքարի 2018-2020 թթ. ռազմավարության՝ «Հակակոռուպցիոն իրավունք առարկան» պետք է դառնար պարտադիր ուսուցանվող առարկա հանրակրթական դպրոցներում: Հարկ է նշել, որ մինչ այդ տարբեր ֆեդերատիվ հանրապետություններում և առանձին վարչական միավորների (oblast) դպրոցներում փորձնական ուսուցանվել է նման առարկա: Թրանսփարենսի Ինթերնեշնլ Ռուսաստանի փորձագետների ջանքերով ստեղծվել է դասագիրք/ձեռնարկ նախատեսված այս առարկան դասավանդող ուսուցիչների համար21:

Ռուսաստանի կառավարությունը հայտարարել էր, որ նպատակ ունի սովորողների շրջանում կոռուպցիայի նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորելը դարձնել կրթական պարտադիր պահանջ՝ դաշնային կրթական չափանիշներով[22]: Այս ծրագրերը շուրջ երեք տարի է, ինչ կան, բայց չափորոշիչների փոփոխություն չի եղել:

Ձեռնարկում առաջարկվում է հակակոռուպցիոն կրթությունը սկսել միջին դասարաններից՝ փուլ առ փուլ: Սկզբնական շրջաններում առաջարկվում է շեշտը դնել իրավիճակային քննարկումների վրա՝ պարզելու արդյոք քննարկվող դեպքերը կոռուպցիայի օրինակներ են և ինչպես են դրանք ազդում կյանքի տարբեր ոլորտների վրա: Այնուհետև ավելի բարձր դասարաններում առաջարկվում է քննել իրավական դաշտը և հակակոռուպցիոն ընթացակարգերը ու կարգավորումները: Ըստ այս ծրագրի՝ սովորողները կատարում են խմբային և ինքնուրույն ուսումնասիրություններ և հետազոտություններ, փորձում են գործնական առաջադրանքներով լուծումներ գտնել այս կամ այն ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար:

Այս պահին, սակայն, այս առարկան հանվել է հանրակրթական դպրոցների ծրագրից՝ լրամշակվելու և հետագայում կրկին ներդրվելու պատճառաբանությամբ:

Առանձին քաղաքներում, ինչպես օրինակ՝ Սանկտ Պետերբուրգում կրթության հանձնաժողովը դպրոցներին տալիս է հակակոռուպցիոն կրթության ծրագիր, յուրաքանչյուր դպրոց կազմում է իր տեղական ծրագիրը, իսկ տարեվերջին զեկուցում է դրա իրականացման մասին:

Սակայն, քանի որ ուսուցիչները հաճախ չգիտեն, թե ինչպես կարելի է խոսել կոռուպցիայի մասին, ինչ թեմաներ լուսաբանել, ինչ ձևաչափեր օգտագործել, հիմնականում հրավիրում են անկախ փորձագետների: Այս մասին տեղեկացնում են Թրասնսփարենսի Ինթերնեշնլ

---

[21] Вандышева, ”Азбука антикоррупционера”, ”Честная игра”, 2017

[22] Указ Президента Российской Федерации о национальном плане противодействия коррупции 2018 - 2020 годы, http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody&nd=102474013

— Ռուսաստանի հակակոռուպցիոն կրթության փորձագետները, ինչպես նաև Սանկտ Պետերբուրգի կրթության բաժնի հաշվետվությունները[23]:

Կան նաև մասնագիտացված դպրոցներ, որոնցում, օրինակ, ուսումնասիրվում է իրավագիտությունը և (կամ) տնտեսագիտությունը: Այս դպրոցներում առանձին ուսուցանվում են հակակոռուպցիոն առարկաներ:

Առանձին դպրոցներում կան նաև «Հակակոռուպցիոն ՀԱԲ»-եր, որոնց մասնակից աշակերտները հնարավորություն են ստանում մասնակցել տարբեր ՀԿ-ների կողմից կազմակերպվող ոչ-ֆորմալ դասընթացների կամ կարճաժամկետ ծրագրերի:

Սլովենիայի փորձը

Սլովենիան կոռուպցիայի ընկալման համաթվով (ունենալով 60 համաթիվ) 36-րդ տեղում է[24]: Սլովենիան պատկանում է այն երկրների ցանկին, որտեղ հակակոռուպցիոն կրթության առանձին առարկա չկա, բայց այն ներդրված է հանրակրթական քաղաքացիական կրթության բաղադրիչի մեջ, որը տարբեր դասարանների առարկայացանկերում պարտադիր կամ կամընտրական առարկա է:

Սլովենիայում քաղաքացիական կրթության՝ որպես ֆորմալ կրթության մի մասի ձևավորումը սկսվել է 1991 թվ-ից (անկախության ձեռքբերումից հետո): 1990 թվ-ի կեսերին Սլովենիայում սկսվեցին բարեփոխումները, որոնցից անմասն չմնաց նաև կրթության ոլորտը: Ամենանշանակալի փաստաթուղթը «Սլովակիայում կրթության սպիտակ գիրքն» էր, որ իրավական տեսանկյունից վերանայում էր կրթության ողջ տեսլականը ու ձևաչափը՝ սկսած նախադպրոցականից, մինչև բարձրագույն կրթություն: 1996 թվ-ին քաղաքացիական կրթությունը մտնում է դպրոցներ որպես պարտադիր առարկայացանկի բաղկացուցիչ մաս[25]: Տարրական դպրոցներում այն ներկայացվում է որպես «քաղաքացիական կրթություն և էթիկա», հետագայում այն նաև ինտեգրվում է բարձր դասարանների այլ առարկաների մեջ որպես միջուսումնական ու միջառարկայական ծրագիր (պատմություն և աշխարհագրություն), իսկ մասնագիտական ուսումնական հաստատություններում (որը երեք տարի է) այն ընդգրկվում է որպես «Հասարակագիտություն» առարկայի մի մաս: Քաղաքացիական կրթության նպատակը նույնն է ինչ Եվրոպայի Խորհրդի «Ժողովրդավարության քաղաքացիական կրթության և մարդու իրավունքների կրթության մասին խարտիա»-ն. «Կրթությունը ժողովրդավարական քաղաքացիության համար» նշանակում է կրթություն,

---

[23] Антикоррупционное образование, Сведения по Перечню разделов антикоррупционного мониторинга, представляемые отделом образования, 2012, http://nevarono.spb.ru/otdel-obrazovaniya/antikorruptsionnaya-politika.html

[24] Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2018, https://www.transparency.org/country/SVN:

[25] Քաղաքացիական կրթությունը Սլովենիայում, https://www.bpb.de/veranstaltungen/netzwerke/nece/206029/citizenship-education-in-slovenia:

վերապատրաստում, իրազեկում, տեղեկատվություն, պրակտիկա և գործունեություն, որի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ, հմտություններ և հասկացողություն, զարգացնել նրանց վերաբերմունքն ու վարքագիծը, ոգևորել սովորողներին փորձարկել և պաշտպանել իրենց ժողովրդավարական իրավունքներն ու պարտականությունները հասարակության մեջ, գնահատել բազմազանությունը և մասնակցել ժողովրդավարական կյանքին՝ օրենքի գերակայության և ժողովրդավարության խթանման ու պաշտպանության նպատակով»[26]:

Բացի ավագ դասարաններից, միջին դպրոցի ցածր դասարաններում կա նաև մեկ այլ պարտադիր դասավանդվող առարկա՝ «Հայրենասիրական և քաղաքացիական կրթությունն և բարոյականությունը» վերնագրով: Ծրագրում գրված է, որ առարկայի նպատակն է ապահովել աշակերտներին քաղաքական գրագիտությամբ, զարգացնել քննական մտածողություն և խթանել նրանց անմիջական մասնակցությունը պետության հասարակական կյանքում:

Ինչպես արդեն նշվել էր, Սլովենիայում հանրակրթության մեջ հակակոռուպցիոն կրթության առանձին առարկա գոյություն չունի, բայց Թրանսփարենսի Ինթերնեյշնլ-ի կողմից 2014թվ-ին առաջարկվել է այն ներդնել քաղաքացիական կրթության առարկայում՝ «Ֆորմալ կրթության մեջ հակակոռուպցիոն կրթության նորարարական մոտեցումները» միջազգային ծրագրի շրջանակներում[27]: Պետք է նշել, որ Եվրոպական Միության երկրները դեռևս հեռու են հակակոռուպցիոն կրթության առանձին առարկա և ծրագիր ունենալուց, բայց ավելի հեշտ է այն ինտեգրել քաղաքացիական կրթության, էթիկայի կամ իրավագիտության բաժիններում: 2014 թվ-ին Թրանսփարենսի Ինթերնեյշնլ-ի Սլովենիայի, Հունգարիայի և Իտալիայի մասնաճյուղերի համագործակցությամբ և Էռասմուս+-ի «KA2 միջնակարգ կրթության ոլորտում ռազմավարական գործունեություն» ծրագրի աջակցությամբ սկսվեց հակակոռուպցիոն կրթության ինտեգրումը դպրոցական ծրագրերին: Ըստ այդ ծրագրի՝ մինչև 2017 թվ-ի ավարտը պետք է կատարվեին հետևյալ քայլերը՝

- մշակել ուսումնաօժանդակ գրքեր և նյութեր աշակերտների և ուսուցիչների համար,
- անցկացնել ուսուցիչների և աշակերտների վերապատրաստում և մոբիլիզացիա,
- ջատագովության նախաձեռնություններ, որոնք ուղղված կլինեն քաղաքականություն մշակողներին և կրթության ոլորտի այլ շահագրգիռ կողմերին:

---

[26] Ժողովրդավարության քաղաքացիական կրթության և մարդու իրավունքների կրթության մասին խարտիա, 2010, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf01f

[27] "World Forum for Democracy: Democracy and Equality, does education matter?" https://rm.coe.int/16806fd49f

Ծրագրի ընթացքում մեկ ամբողջական մոտեցում որդեգրվեց, որը սովորողներին խրախուսում էր ընդունել հակակոռուպցիոն կրթությունը դասարաններից դուրս և համագործակցել քաղաքացիական հասարակության, մեդիայի, հակակոռուպցիոն գործակալությունների և այլ շահառու խմբերի հետ: Ուսուցիչներին էլ, իրենց հերթին, առաջարկվում էր օգտագործել ոչ ֆորմալ կրթական և մասնակցային մեթոդներ և միջառարկայական կապերը ավելի խորացնել: Սլովենիայում քայլեր են ձեռնարկվում հակակոռուպցիոն թեմաներն ավելացնել կրթական ծրագրերում կամընտրական ծրագրերի ժամերին և այլ ծրագրային առարկաների մեջ:

Հունգարիայի փորձը

Հունգարիան համարվում է թերի/կիսով չափ ժողովրդավար երկիր: Ըստ Կոռուպցիայի ընկալման համաթվի՝ այն 180 երկրների մեջ 64-րդն է (46 ինդեքսով):

Հետսոցիալիստական շատ երկրների նման Հունգարիայում քաղաքացիական կրթությունը զարգացել և ներդրվել է 1990-ական թվականներին (երբ երկրում կառավարման ձևեր էին փոփոխվում)[28]: Հունգարիայում, ինչպես վերոնշված մյուս երկրներում, հակակոռուպցիոն կրթական ծրագրերը ներդրվել են, որպես քաղաքացիական կրթության մի մաս (Էթիկա առարկայի շրջանակներում)՝ ֆինանսավորվելով տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից: 2012 թվ-ին կառավարության կողմից հաստատվեց «Կոռուպցիայի կանխարգելման ծրագիրը», որը իր մեջ ներառում էր բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաների և արժեհամակարգի ինտեգրում տարրական և միջին դպրոցներում: Այս ծրագրի ներդրման համար Արդարադատության նախարարությունը սկսեց համագործակցել քաղաքացիական հասարակության հետ՝ ստանալով կարծիքներ և փոփոխության ենթարկելով այն: Կար մի պարզ ճշմարտություն. կոռուպցիոն երևույթների օրինակները պետք է հիմնականում բերված լինեն տեղական (Հունգարիա) կոնտեքստից՝ երևույթի համապարփակ պատկերացման և ընկալման համար: Կրթության ոլորտի որոշումներ կայացնողների համաձայնությունը ստանալուց հետո թեման մտավ Էթիկա առարկայի և Ազգային Հիմնական ծրագրի մեջ՝ ներառվելով 11-րդ և 12-րդ դասարանների կրթական գործընթացում: Հակակոռուպցիոն և բարեվարքության կրթական ծրագրի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ կոռուպցիայի սոցիալական ընկալման մասին և անհատական ու հավաքական հմտություններ երևույթի դեմ պայքարելու համար: Ըստ մշակված մոդուլի գիտելիքն ու հմտությունները պետք է լինեն հետևյալը՝

1. «շահի արդար և անարդար ներկայացում,
2. արդարացված և ոչ արդարացված օգնություն, կաշառակերություն և պասիվ կաշառք,
3. մասնավոր շահ և հասարակական բարիք,

[28] Teachers' Educational Experience and Confidence In Relation To Students' Civic Knowledge Across Countries, http://www.citized.info/pdf/ejournal/Vol%201%20Number%201/003.pdf

4. կոռուպցիա երևույթն ու դրա վտանգները, իշխանության չարաշահում և կոռուպցիան ամենօրյա կյանքում,
5. կաշառքի և կոռուպցիայի դեմ պայքարի գործիքներ,
6. բարոյական երկընտրանքի գնահատում,
7. կոռուպցիայի վերացման գործում անհատի և համայնքի դերն ու պարտականությունները»[29]:

Հատկանշական է, որ թեմաների ուսումնասիրման համար ընտրված մեթոդաբանության և հարցադրումներ կատարելու համար ուսուցիչները ունեն ազատություն: 2015-2016թ.-ի որոշվեց, որ հակակոռուպցիոն կրթական ծրագիրը կներդրվի նաև հարակից այլ առարկաների մեջ, ի հավելումն տարվա ընթացքում դպրոցներում կանցկացվեն նաև միջոցառումներ՝ որոնց շրջանակներում կներկայացվեն գործնական հակակոռուպցիոն ծրագրեր:

Ըստ «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» 2010 թվ-ի տվյալների՝ աշխարհի երկրների ցանկում Հունգարիան 50-րդն էր 4.7 ինդեքսով[30], իսկ 2018 թվ-ի ինդեքսով՝ (46 ինդ.) Հունգարիան 46-րդը: Ինչպես Ինդոնեզիայի դեպքում: Սակայն այս միջակայքում, օրինակ 2017-ին այն եղել է 66-րդ տեղը, որը ցույց է տալիս, որ անգամ անուղղակի կերպով կրթությունը հակակոռուպցիոն կրթությունը ազդեցություն չի ունեցել: Հետազոտելով ժողովրդավարության ինդեքսը 2014թվ-ից սկսած պարզ է դառնում, որ մինչև 2017 թվ-ը Հունգարիայում քաղաքական մասնակցության ինդեքսը ամենացածրն է՝ բոլոր տարիների համար 4.44: Հետևաբար՝ կարելի է ասել, որ տարիներ առաջ ներդրված կրթական ծրագրերը (ոչ ուղղակի կերպով) այնուամենայնիվ քիչ ազդեցություն են ունեցել Հունգարիայում քաղաքացիների քաղաքական մասնակցության վրա:

Լիտվայի փորձը

Ըստ «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» 2018 թվ.-ի տվյալների՝ Լիտվան աշխարհի երկրների ցուցակում 38-րդն է՝ 59-ը ինդեքսով:

Լիտվայում հակակոռուպցիոն կրթական ծրագրերը ներդրվել են «ժամանակակից դիդակտիկ կենտրոնի» կողմից (հասարակական կազմակերպություն, որը միջազգային փորձագետների միջոցով սկսում է երկարաժամկետ ծրագիր՝ Լիտվայում և նրա տարածքից դուրս մշակելով հակակոռուպցիոն կրթական ծրագրերի քայլերը ֆորմալ կրթության մեջ): 2002 թվ-ին Հատուկ Անկախ Ծառայության Կոռուպցիայի կանխարգելման բաժինը այս կազմակերպությանն առաջարկում է ներդրում ունենալ «Կոռուպցիայի կանխարգելման ազգային ծրագրում», որը Լիտվայի Ազգային ժողովի կողմից հավանության արժանացավ 2002-ի հունվարին և այդ ծրագրի խնդիրներից մեկն էր. «մշակել և ներդնել համապարփակ հակակոռուպցիոն ծրագիր ավագ դպրոցների և

---

[29] "Education for Integrity: Teaching on Anti-Corruption, Values and the Rule of Law", OECD, p. 86, https://www.oecd.org/governance/ethics/education-for-integrity-web.pdf

[30] Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2010, https://www.kpk-rs.si/kpk/wp-content/uploads/2018/03/TI_CPI_2011_report_view.pdf

բարձրագույն կրթության համար: Հակակոռուպցիոն կրթությունը պետք է դառնա հանրակրթության անբաժան մասը»[31]: Սակայն տարբեր զեկույցներում նշվում է, որ դեռևս այդ ժամանակ որևէ մեկը գաղափար չուներ, թե հակակոռուպցիոն կրթությունն ինչ է, և ի՞նչ մեթոդաբանությամբ պետք է ներդրվի, ավելին՝ նրա հետևում կար Լիտվայի կառավարության քաղաքական կամքը, բայց չկար ֆինանսական աջակցություն, ձգտում առանց գործողությունների պլանի: Պետք է նշել, որ ծրագիրը և համագործակցությունը Հատուկ Անկախ Ծառայության Կոռուպցիայի կանխարգելման բաժնի հետ շարունակվում է մինչև այժմ և 2015 -2025 թթ.-ի «Կոռուպցիայի ազգայի ծրագրի» փաստաթղթում ևս մեկ անգամ ամրագրվել է կառույցի հետ պետության համագործակցությունը՝ հատկապես կրթության ոլորտում. «դպրոցներում հակակոռուպցիոն կրթական ծրագրերի վերանայում, թարմացում եւ իրականացում; հակակոռուպցիոն ուսուցում Հատուկ Անկախ Ծառայության հետ համագործակցելով՝ օրենքով սահմանված բոլոր կարգի դպրոցներում ձևավորված կրթական ծրագրերի իրականացման միջոցով»[32]:

Ժամանակակից դիդակտիկ կենտրոնը սկսեց ծրագիր մշակել և ներկայացրեց Լիտվայի Բաց Հասարակության Հիմնադրամներին. 2002թվ.-ի մարտ-մայիս ամիսներին համագործակցությունը հաստատվեց՝ կողմերն էին Հատուկ Անկախ Ծառայությունը, ԿԳՆ ներկայացուցիչները, Թրանսպարենսի Ինթերնեյշնլ Լիտվայի ներկայացուցիչները և Դանիացի մասնակիցները՝ որպես միջազգային փորձագետներ: Հետագայում նաև այցեր եղան Լեհաստան, որտեղ ներկայացուցիչները ծանոթացան տեղական փորձին, ուսումնասիրեցին դասագրքերը, խոսեցին նրանց հեղինակների և ուսուցիչների հետ: Ծրագիրը սկսվեց 2002թվ.-ի սեպտեմբերին և ունեցավ մեկ տարի տևողություն:

Ծրագրի նպատակն էր ստեղծել ինտեգրված հակակոռուպցիոն կրթական ծրագիր դպրոցների համար՝ ներառելով ուսուցիչների համար խորհուրդներ, ինչպես նաև պատրաստելով նրանց որպես ծրագրի ուսուցիչ-տարածողներ: Ծրագրի մեկնարկը տրվեց որպես մրցույթ, որն ուներ հետևյալ պահանջները.

1. Դիմում-հայտերը պետք է ներկայացված լինեին դպրոցներում կազմված թիմերի կողմից՝ որոնք կներառեին տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչներ:
2. Թիմերը պետք է վերցնեին պատասխանատվություն մասնակցելու բոլոր ծրագրերին, համագործակցելու այլոց հետ, զարգացնելու ծրագիրը և փորձարկելու այն իրենց դասերի ժամանակ:
3. Ուսուցիչները պարտավոր էին գրել մոտիվացիոն նամակներ:
4. Ուսուցիչները պետք է ծրագրեր մշակելու և այլ ծրագրերի մասնակցելու փորձ ունենային:

---

[31] “Corruption and Anti-Corruption Policy in Lithuania 2002”, p. 356, http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/untc/unpan018131.pdf

[32] “Resolution On The Approval Of The National Anti-Corruption Programme Of The Republic Of Lithuania For 2015-2025”, p. 26, https://www.lrs.lt/sip/portal.show?p_r=16385&p_k=2&p_t=154241

Թվում է, թե պահանջները անիրականանալի են, բայց 149 ուսուցիչ և 52 դպրոց դիմել էր ծրագրին, որից, սկզբնական շրջանում, ընտրվեցին 11 թիմեր: Ծրագրի ընթացքը նորարարական էր, քանի որ ուսուցանող, սովորելիք և զարգացնող նյութերը ստեղծվում էին միաժամանակ՝ ուսուցիչներին տալով գիտելիք կոռուպցիայի մասին և նրանց հետ դասապլաններ պատրաստելով: 2004-2011 թթ-ին վերապատրաստվել է 564 ուսուցիչ[33] (վերապատրաստում իրենից ներկայացնում է 36 ժամ մասնագիտական զարգացման ծրագիր՝ մեթոդաբանական, ֆորմալ և ոչ ֆորմալ ծրագրերով, որից հետո երեք օր շփում դպրոցներում և երկու փորձնական դաս՝ Հատուկ Անկախ ծառայության փորձագետի հսկողությամբ ու աջակցությամբ):

Կրթական ծրագրի զարգացման փուլում, ուսուցիչները նախ պետք է հասկանային և ձևակերպեին կոռուպցիայի բոլոր տեսակները (վտանգ կար, որ աշակերտները ոչ հեշտությամբ կկարողանան հասկանալ դրա բոլոր դրսևորումները)[34]: Հետագայում նրանք քննարկում էին, թե ինչպես պետք է օգտագործել երկրի կոնտեքստը և բացատրել այդ երևույթները (հղումներ տալով Լիտվայի օրենսդրական դաշտին): Մեծագույն մարտահրավերներից մեկը՝ «Կոռուպցիայի» թեման, բնական կերպով դասարաններ մտցնելն էր, մտավախություն կար, որ դրա մասին արհեստական դիսկուրս կբարձրացվի և թեմային դրական հասցեագրում տալու փոխարեն, աշակերտները կվախենան այդ երևույթի հետ առերեսվելուց: Այսպիսով, ծրագրի վրա աշխատող թիմը որոշեց դասընթացի և թեմայի ուսուցման հիմքում չոր ինֆորմացիայի և փաստերի փոխարեն, դնել արժեքներ, օրինակ՝ հասկանալ, թե ինչու է կոռուպցիան սխալ, քննարկել տարբեր գործողություններ, որոնք կներառեին նաև անձնական պատմությունները և փորձել բարոյական արժեքների միջոցով խնդիրներին լուծում տալ (այս մոտեցման հիմքն էր արդարությունն և համայնքի վրա դրա ազդեցությունը):

Լիտվայի դպրոցներում կիրառվող դասագրքերը (տարբեր առարկաների շրջանակներում), պետք է ունենանան հետևյալ պարտադիր թեմաները՝

- Կոռուպցիայի հայեցակարգ: Մի շարք սահմանումներ:
- Կոռուպցիոն հանցագործությունների տեսակներ և ձևեր
- Կոռուպցիայի հետևանքները: Կոռուպցիայի տնտեսական, քաղաքական, սոցիալական, բարոյական հետևանքները: Կոռուպցիայի ակնհայտ և թաքնված վնասը:
- Կոռուպցիայի հնարավորությունները ժողովրդավարական մարմիններում (քաղաքական կուսակցություններ, ընտրություններ, խորհրդարան, կառավարություն, դատարաններ և տեղական իշխանություններ): Հասարակական և մասնավոր շահեր:

---

[33] "Advocating for Honesty and Transparency, Anti-Corruption Education Initiatives in Lithuania", http://etico.iiep.unesco.org/en/resource/advocating-honesty-and-transparency-anticorruption-education-initiatives-lithuania

[34] "Shaping Values for a New Generation: Anti-Corruption Education in Lithuania, 2002-2006", 2015, pp. 6-7, https://successfulsocieties.princeton.edu/publications/shaping-values-new-generation-anti-corruption-education-lithuania-2002%E2%80%932006

- Կոռուպցիայի մեծ և մանր, պատժելի և չպատժելի հանցագործություններ:
- Կոռուպցիայի դեմ պայքարի հնարավորությունները: Քաղհասարակության դերը: թափանցիկության, հաշվետվողականության, իրազեկվածության դերը:
- Լիտվայում կոռուցպիայի մակարդակը: Կոռուպցիայի պատճառներն ու նախապայմանները վերացնելու ուղիները պետական ռազմավարություններում և ծրագրերում[35]:

Լիտվայի հակակոռուպցիոն կրթական ծրագրերի ներդրումը նպատակ ուներ արմատական կերպով փոխել սովորողների վերաբերմունքը կոռուպցիայի նկատմամբ: Թրանսփարենսի Ինթերնեյշընլի անցկացված «Լիտվային կոռուպցիայի քարտեզը» զեկույցում հարցումները ցույց են տվել, որ հարցվածների 12%(2004 թվ.-ին), իսկ 21%(2011 թվ.-ին) ասել է, որ երբևէ կաշառք չի տա[36]: Դժվար է ասել, թե ինչ ուղիղ ազդեցություն է ունեցել վերոնշյալ ծրագիրը այս վերաբերմունքի վրա, սակայն կարելի է նշել, որ այս տեսակ հաջողության վրա անուղղակի ազդեցություն ունեցել է:

Բուլղարիայի փորձը

Բուլղարիան ըստ «Կոռուպցիայի ընկալման համաթվի» 2018 թվականի զեկույցի՝ աշխարհի 180 երկրների ցանկում 77-րդն է՝ 42 ինդեքսով:

Ի տարբերություն վերոնշված այլ երկրների, որտեղ հակակոռուպցիոն կրթությունը մեծապես կապված էր երկրների հակակոռուպցիոն ռազմավարության և կոռուպցիայի դեմ պայքարի հետ, Բուլղարիայում հակակոռուպցիոն կրթական ծրագիրը ուղիղ կապ ունի կրթության մեջ 2004թվ.-ին տեղ գտած բարեփոխումների և 2005-ին Եվրոպայի Խորհրդի կողմից «Ժողովրդավարական քաղաքացիությունը կրթության միջոցով» ծրագրի հետ: Այնուամենայնիվ, տարբերություններին զուգահեռ նմանությունը հասարակական կազմակերպությունների խաղացած դերի հետ է կապված, քանի որ Բուլղարիայում ևս քաղաքացիական կրթության ներդրումն ու հետագա բարելավվում իրականացվել է երկրում գործող կազմակերպություններից մեկի՝ «2000 կոալիցիայի» շնորհիվ:

2004 թվ.-ի սկզբին «2000 կոալիցիան» ստեղծեց փորձագետների խումբ՝ գնահատելու միջին դպրոցներում հակակոռուպցիոն կրթական ծրագրերի դերը քաղաքացիական կրթության մեջ: Այս ծրագրի նպատակն էր երիտասարդներին տալ թարմացված տեղեկություն երևույթի մասին, ինչպես նաև խորքային գիտելիք տալ հասարակական ինստիտուտների գոյության մասին և բացատրել, թե ինչպես է ձևավորվում պետական բյուջեն և հարկային համակարգը: 2004 թվ.-ին Բուլղարիայի կրթության և գիտության նախարարը ներկայացրեց միջին դպրոցի համար նախատեսված այլընտրանքային հակակոռուպցիոն ծրագիր:

---

[35] Ministry of Education and Science of the Republic of Lithuania, Methodical material for general and higher education schools, 2017

[36] Transparency International, Lithuanian Map of Corruption 2001–2005, page 108, https://www.transparency.lt/wp-content/uploads/2015/10/lithuanian_map_of_corruption_2001-2005i.pdf

2004 թվ.-ին այս կազմակերպության կողմից հրատարակվեցին նաև հակակոռուպցիոն կրթության մի քանի ուսումնական ձեռնարկներ, որոնք պետք է աջակցեին միջին դպրոցների դասապրոցեսներին: Լույս տեսան նաև ուսուցիչների համար նախատեսված ուսումնաօժանդակ ձեռնարկները, որոնցից մեկը՝ «Կոռուպցիան 100 պատասխանում» (http://old.csd.bg/artShow.php?id=4528) ձեռնարկն էր: Այն անդրադառնում էր կոռուպցիայի մասին ամենաշատ տրվող 100 հարցերին: Ձեռնարկում տեղ են գտել ոչ միայն այդ հարցերի պատասխանները, այլ նաև մի շարք հասկացությունների սահմանումներ, տեղական և միջազգային երևույթների վերլուծություններ: Այն բաժանված է 5 մասի.

1. Սահմանումներ
2. Օրենքներ և կոռուպցիա
3. Կոռուպցիան հասարակական կյանքում
4. Կոռուպցիան Բուլղարիայում
5. Կոռուպցիայի դեմ պայքար

Ընդհանուր առմամբ ամփոփելով միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ կարելի է եզրակացնել, որ չկա միասնական կամ լավագույն մոտեցում՝ հակակոռուպցիոն գիտելիքներ տարածելու հարցում, յուրաքանչյուր երկիր ինքն է ընտրում իր քաղաքական իրավիճակին հարմար տարբերակը:

Եզրակացություն

Այսպիսով ամփոփելով կատարված հետազոտությունը՝ կարելի է փաստել, որ թերացումներ, բացեր և անհամատասխանություններ են առկա թե՛ պետական չափորոշչում, թե՛ առարկայական չափորոշիչներում և ծրագրերում, թե՛ ուսուցչի մեթոդական ձեռնարկներում և իհարկե դասագրքերում: Հասարակագիտություն առարկան ունի լուրջ վերանայման և բարեփոխումների կարիք վերոնշյալ բոլոր աստիճաններում՝ սկսած չափորոշչից մինչև դասագիրք և ժամաքանակ:

Ամենամեծ խնդիրներից է կոռուպցիային վերաբերող բաժնի կտրվածությունը ընդհանուր թեմաներից: Բացակայում են ինչպես տարբեր թեմաների միջև կապերը, այնպես էլ առավել ևս միջառարկայական կապերը:

Հարցված բոլոր փորձագետները և ուսուցիչները պնդում էին, որ միայն տարբեր դասարաններում, ուրիշ թեմաների հետ կապելով է հնարավոր ամրապնդել այս գիտելիքները: Այսպես սովորողը ստանում է ընդհանուր պատկեր, որտեղ բոլոր մասնիկները փոխկապակցված են: Սրա մասին է վկայում նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը:

Դասագրքերում առկա նյութերը թերի են, մեծ մասամբ հնացած և չեն արտացոլում կառավարության որդեգրած մոտեցումները կոռուպցիայի դեմ պայքարում, անհրաժեշտ և բավարար միջոց չեն կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության ձևավորման

և հակակոռուպցիոն վարքագիծ ձևավորելու համար: Հաճախ անգամ պարունակում են կողմնակալ մոտեցումներ, որոնք արդեն քննարկվել են:

Հատկապես հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված Կառավարության հանձնառությունները՝ այս փոփոխությունների անհրաժեշտությունը դառնում է ավելի արդիական և կարևոր:

Հուսադրող է, որ հետազոտության ընթացքում ՀՀ կառավարությունը հաշվի է առել Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ առաջարկությունը՝ Հասարակագիտություն առարկայի՝ հետազոտվող թեմաներին առնչվող բովանդակության փոփոխության մասին և այն ներառել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և 2019-2022 թվականների գործողության ծրագրի մեջ:[37]

Ռազմավարությամբ կառավարությունը պարտավորվում է ավագ դպրոցում ուսուցանվող «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ կատարել ուսումնասիրություն և փոփոխել բովանդակությունը: Առաջարկվում է կազմակերպել ուղղորդիչ միջոցառումներ ուսուցիչների համար, ինչպես նաև մշակել և տպագրել ուսուցիչների համար ուղղորդիչ մեթոդաբանական ձեռնարկ:

Սա կօգնի ուսուցիչներին թեմայի դասավանդման ընթացքում, թույլ կտա արդյունավետորեն կիրառել նախանշված մեթոդաբանությունը և արդյունքում բարձրացնել դասավանդման արդյունավետությունը:

Պլանավորվել են տեղական գործուղումներ՝ դասավարդման ընթացքի ուսումնասիրման և մոնիթորինգի համար:

Փաստ է, որ յուրաքանչյուր կրթական համակարգ անմիջականորեն արտացոլում և արտահայտում է պետության վարած քաղաքականությունն ու ունեցած փիլիսոփայությունը, յուրաքանչյուր կայացրած որոշում, ձևակերպված օրենք և առաջարկված չափորոշիչ ազդելու է հազարավոր մարդկանց աշխարհայացքի ձևավորման գործընթացի վրա:

Այդ առումով շատ կարևոր է, որ մինչև որոշակի գործընթացներ սկսելը կրթության ոլորտի պատասխանատուները կարողանան սահմանել իրենց նպատակներն ու ակնկալվող վերջնարդյունքները, իսկ պրոցեսը մշակվի կրթության հետ առնչվող յուրաքանչյուր շահառուի հետ՝ հաշվի առնելով խելամիտ ու կարիքից ելնող գործընթացները: Հատկապես կարևոր է դասավանդող ուսուցիչների ներգրավումը ողջ գործընթացում: Սա յուրաքանչյուր գալիք փաստաթղթին կտա որոշակի «լեգիտիմություն» և կիրառության լայն շրջանակ: Մասնակից լինելով չափորոշիչների մշակմանը ուսուցիչները՝ որպես սովորողներին գիտելիքը հասցնող առաջնային օղակ ոչ միայն բովանդակային արժեքավոր ներդրում կարող են ունենալ, այլև իրենց զգալով պրոցեսի մաս, առավել պատասխանատու կլինեն սահմանված արժեքների մատուցման գործում:

[37] ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարություն, կետ 123

Առաջարկություններ

Համադրելով փաստաթղթերի, դասագրքերի և ուսումնաօժանդակ նյութերի վերլուծությունը, փորձագետների, ուսուցիչների և սովորողների հետ հարզազրույցները, միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ առաջարկվում է՝

ՀՀ ԿԳՍՄ նախարարությանը՝

1. Չափորոշիչների և առարկայական ծրագրերի վերանայման նախնական փուլում կազմակերպել հանրային քննարկումներ «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների հետ:

2. Վերանայել չափորոշիչներում ամրագրված արժեքները և գիտելիքները՝ ոչ թե ամեն հաջորդ տարի կրկնելով, այլ հարստացնելով դրանց բովանդակությունը՝ պարզից բարդ: Անհրաժեշտ է ավելի հստակ վերջնարդյունքներ սահմանել:

   2.1. Կիրառել այսպես կոչված «սպիրալաձև» ուսուցման մեթոդը: Այն է նախապես տալ ավելի պարզ նյութ, այնուհետև ավելի բարձր դասարաններում այն ավելի հարստացնել և ամրապնդել իրավական գիտելիքով: Սրա անհրաժեշտության մասին նշել են հարցված փորձագետները, ուսուցիչները, սա է վկայում նաև միջազգային լավագույն փորձը:

3. Չափորոշիչում հստակ ամրագրել կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք ձևավորելը, բարեվարքության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները:

4. Ուժեղացել միջառարկայական կապերը. կոռուպցիային, բարեվարքության և հաշվետվողականությանը վերաբերող գիտելիք և վերաբերմունք ձևավորող նյութեր, բաժիններ ունենալ նաև այլ առարկաներում, օրինակ հայոց պատմության շրջանակներում:

   4.1. Դիտարկել կոռուպցիային, բարեվարքությանը և հաշվետվողականությանը վերաբերող թեմաների ուսուցումը ավելի վաղ դասարաններից սկսելու հնարավորությունը, օրինակ պարզ հասկացություններ, ինչպես ենթադրենք հովանավորչությունը, կարող է ներառվել «Ես և շրջակա աշխարհը» առարկայում:

5. Համապատասխանեցնել առարկայական ծրագրերը չափորոշիչներին, ինչպես նաև սահմանված պահանջները, մատուցվող նյութը, առաջարկվող մեթոդները և դրա համար սահմանված ժամաքանակը: Վերոնշվածների միջև առկա անհամապատասխանությունը արդեն քննարկվել է:

   5.1. Պահպանելով նույն դասարանի համար մեկից ավելի հաստատված գրքեր ունենալու պրակտիկան, որը որոշակի ակադեմիական ազատություն է տալիս

դպրոցների ուսուցչական կազմին, ապահովել այդ դասագրքերի համապատասխանությանը չափորոշչին և ուսումնական պլանին:

6. Իրականացնել ուսուցիչների լայնածավալ վերապատրաստումներ՝ թե՛ մատուցվող նյութի բովանդակության, թե՛ փոխանցվող արժեքային համակարգի շեշտադրումներով: Ուսուցիչներին տրամադրել նոր գործիքներ, նոր մեթոդներ: Խթանել այլընտրանքային, ինտերակտիվ մեթոդները, խթանել հնարավորության դեպքում աուդիո և տեսանյութերի, ֆիլմերի դիտումները: Նախարարության կողմից հաստատված այսպիսի նյութերի շտեմարան կարող է լինել:

<u>Հրատարակչություններին և դասագրքերը կազմող հեղինակային խմբերին՝</u>

7. Վերաշարադրել խիստ իրավական բառապաշար ունեցող, օրենքների դրույթները արտատպող դասագրքերը՝ դրանց լեզուն դարձնելով պարզ և ընկալելի:

   7.1. Դասագրքերի բովանդակային մասը մշակելու գործընթացում բացի նեղ ոլորտային ակադեմիկների և դասախոսներից պետք է ներառել հատկապես ուսուցիչների՝ տեքստերը և դրա միտքը աշակերտներին ավելի հասանելի դարձնելու համար: Միայն ուսուցիչները կարող են պրակտիկ փորձի վրա հիմնված նպաստել դասագրքերի մատչելի, դյուրըմբռնելի տեքստի ձևավորմանը:

8. Կոռուպցիային վերաբերող բաժիններում պարտադիր ներառել տեղեկատվություն կոռուպցիայի առավել տարածված տեսակների, առաջացման պատճառների և հետևանքների մասին՝ կապելով դրանք իրական կյանքի իրավիճակների հետ: Պահպանել չեզոքությունը: Վերանայել այն նյութերը, որտեղ որպես կոռուպցիայի պատճառ շեշտադրվում են միայն մարդկային բնույթը կամ մենթալիտետային հարցերը՝ ներառելով համակարգային, պետահիրավական խնդիրները:

9. Հետևելով միջազգային տենդենցներին՝ սովորողների մոտ շեշտադրել բարեվարքության, թափանցիկության ու հաշվետվողականության դրական կողմերը: Ցույց տալ այս սկզբունքների անմիջական ազդեցությունը հասարակության և իրենց կյանքի որակի վրա:

10. Կոռուպցիային, բարեվարքության և հաշվետվողականությանը անդրադարձ կատարել առնչակից թեմաներում ու բաժիններում՝ տնտեսագիտության, քաղաքագիտության, պետությանը և իրավունքին վերաբերող բաժիններում: Օրինակ՝ ընտրություններ բաժնում խոսել ընտրակաշառքներից, վարչական ռեսուրսի չարաշահումից և այլն:

11. Վերանայել՝

   - յուրաքանչյուր բաժնին հաջորդող հարցադրումները՝ դրանք դարձնելով անկողմնակալ, քննական մտածողությանը դրդող,

- գործնական առաջադրանքները՝ ներառելով վերլուծություններ, անհատական կամ թիմային փոքրիկ ուսումնասիրություններ կատարելու պահանջներ: Սա կստիպի սովորողներին կարդալ, ուսումնասիրել լրացուցիչ գրականություն, ավելի լավ մարսել նյութը, ոչ թե միայն անգիր անել և վերարտադրել: Ներառել իրական դեպքերի ուսումնասիրություններ (case stadies), ինչը կօգնի հեշտ հասկանալ մատուցվող նյութը, այն պռոեկտել իրական կյանքի վրա, զգալ օրինակ կոռուպցիայի տեսակների անմիջական ազդեցությունը իրենց իսկ կյանքի վրա,

- դասագրքերում առկա վիզուալ պատկերները, ապահովել նրանց համապատասխանությունը թեմային և անկողմնակալությունը՝ հաշվի առնելով, որ նկարներն ամենահեշտն են տպավորվում և դաջվում ենթագիտակցության մեջ:

Հապավումների ցանկ

ՀՀ Հայաստանի Հանրապետություն

ԿԳՍՄՆ Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն

ԹԻՀԿ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

ԿԸՀ Կոռուպցիայի ընկալման համաթիվ

ՀԿ Հասարակական կազմակերպություն

ՏՀԶԿ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության

Օգտագործված գրականության ցանկ

1. «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի», http://www.un.am/res/UN%20Treaties/XI_9.pdf
2. «Ժողովրդավարության քաղաքացիական կրթության և մարդու իրավունքների կրթության մասին խարտիա», 2010, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf01f
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
4. ՀՀ կրթության մասին օրենք
5. ՀՀ օրենքը հանրակրթության մասին
6. ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչ
7. Հասարակագիտություն առարկայի չափորոշիչ և ծրագիր
8. Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Գյուլբուդաղյան Ա., «Հասարակագիտություն 11», 2015,
9. Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., «Հասարակագիտություն 8», 2013
10. Գյուլբուդաղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., «Հասարակագիտություն 8», 2013
11. Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Հասարակագիտություն 9, 2013
12. Գյուլբուդաղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., «Հասարակագիտություն 9», 2013
13. Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., Խաչատրյան Հ., Վարդանյան Կ., Աղաջանյան Հ., «Հասարակագիտություն 10», 2009
14. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., «Հասարակագիտություն 12», 2011
15. Հասարակագիտություն 8-9 դասարանների ուսուցչի ձեռնարկ, 2013
16. Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2018, https://www.transparency.org/cpi2018/
17. Ինտեգրելով հակակոռուպցիոն կրթությունը դպրոցական ծրագրերում, https://pdfs.semanticscholar.org/db3a/2df74f03ec4d9bd04610c6b9617f8e108896.pdf
18. “Anti-corruption Glossary”, https://www.transparency.org/glossary/term/corruption
19. Քաղաքացիական կրթությունը Սլովենիայում, https://www.bpb.de/veranstaltungen/netzwerke/nece/206029/citizenship-education-in-slovenia
20. “Advocating for Honesty and Transparency, Anti Corruption Education Initiatives in Lithuania”, http://etico.iiep.unesco.org/en/resource/advocating-honesty-and-transparency-anticorruption-education-initiatives-lithuania
21. Balkan Progress on Corruption “Stagnating’. https://balkaninsight.com/2018/02/21/watchdog-warns-captured-political-systems-haunt-the-balkans-02-21-2018/
22. “Corruption and Anti-Corruption Policy in Lithuania 2002”, http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/untc/unpan018131.pdf
23. Education for Integrity: Teaching on Anti-Corruption, Values and the Rule of Law”, OECD, https://www.oecd.org/governance/ethics/education-for-integrity-web.pdf

24. Paulo Friere, "Pedagogy of Oppressed", 1970, ISBN: 9780826412768.
25. "Resolution On The Approval Of The National Anti-Corruption Programme Of The Republic Of Lithuania For 2015-2025", 2015, p. 26, https://www.lrs.lt/sip/portal.show?p_r=16385&p_k=2&p_t=154241
26. "Shaping Values for a New Generation: Anti-Corruption Education in Lithuania, 2002-2006", 2015, https://successfulsocieties.princeton.edu/publications/shaping-values-new-generation-anti-corruption-education-lithuania-2002%E2%80%932006.
27. https://www.transparency.lt/wp-content/uploads/2015/10/lithuanian_map_of_corruption_2001-2005i.pdf .
28. Teachers' Educational Experience and Confidence In Relation To Students' Civic Knowledge Across Countries, http://www.citized.info/pdf/ejournal/Vol%201%20Number%201/003.pdf
29. "World Forum for Democracy: Democracy and Equality, does education matter?" https://rm.coe.int/16806fd49f